

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

*DIEGHIEGAIDOU*

ديجيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الارمنية العامة



100-ԱՄԵԱԿ ԱՂԵ-ԲՍԱՆԴԻՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Մտորումներ	1
Նախագահ Պ. Սեդրակեանի Յայտարարութիւնը	2
«Տեղեկատու»ն Բոլորին	2
Հրաժեշտի Նամակ Պերճ Թէրզեան	3
60 տարի ՀԲԸՄի Պատնէշին Վրայ	5
Պանծալի 20-ամեակ մը	8
Այցելութիւններ	10
«Արմատ» Գարուն 2024	11
ՀԲԸՄի Ամառնային դպրոցը Լալա Շամամեան-Նիկոլէան	13
Հոգեհանգիստ Բարերարուհիին	15
17-ամեակի հանդիպում-քննարկում	15
Բացում Վ. Ծիզմէճեան Արխիւսարահի	16
Մեր Հանդիպումները Մօ. Միհրան Ղազէլեան	17
Նոր հրատարակութիւն՝ Որբուհիներ Անժիկ Յակոբեան-Կանիմեան	22
Նոր հրատարակութիւն՝ «Նուպար Փաշա Մեծն Ծառայ Եգիպտոսի»	24
Գնահատանք Գաղութիս	25
Շուլց Դպրոցին 100-ամեակը Անժիկ Յակոբեան-Կանիմեան	26
Ակնթարթներ Անմահացնող Վարպետը Անժիկ Յակոբեան-Կանիմեան	28
«Չագըր Հիմնադրամ»ի հրատարակութիւնները (2022-2024)	30
ՀԲԸՄիութիւնը վաղուց	33
Մեր Կորուստները՝ Պետրոս Փիանտարեան	34
Մանիսալեան Վարժարան	35
Աֆաֆին Հայեացքը Սօսի Ներեպեան-Յակոբեան	36
Կարճ Լուրեր	38
Աղէքսանդրիոյ Միջաշարքը եւ 100-ամեակի Տօնակատարութիւն Սօսի Ներեպեան-Յակոբեան	41
Անդամական	

ԽՄԲԱԳԻՐ  
Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ  
Սարտիկ Պալաեան

ՍՐԲԱԳՐԻՉ  
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ  
Անայիս Ծիզմէճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ  
ՁԵՒԱՌՈՐՈՒՄ  
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Nubar Digital

Գահիրեի ՀԲԸՄ-ի  
լուրերուն հետեւեցէք  
www.agbuegypt.com  
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան  
եւ Հայերը Արաբական Մա-  
մուլին մէջ. 1876-1923»  
հաւաքածոյի նիւթերուն  
www.arminmedia.com  
կայքէջով:

«Տեղեկատու»ի յօդուածա-  
գիրներուն արտայայտած  
կարծիքները անպայմանօրէն  
չեն ներկայացներ Գահիրեի  
ՀԲԸՄի պաշտօնական  
տեսակէտները:

ԹԻԻ 112 ՆՈՐ ՇՐՋԱՆ,  
ՅՈՒԼԻՍ 2024



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Եգիպտոսի ամենէն տաք շրջանն է ասիկա, տաք եւ խոնաւ այնքան, որ մարդիկ կամ կը նախընտրեն իրենց տուներէն դուրս չելլել, կամ կը փորձեն ծովեզերք երթալ, աւելի զով զգալու յոյսով:

Սակայն կլիման բնաւ արգելք չէ, որ գաղութը իր եռանդուն առօրեան շարունակէ բազմազան ձեռնարկներով:

Գաղութիս երէց անդամներէն եւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին եւ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին պատուոյ ատենապետ Պերճ Թէրզեան այս տարուան Մայիսին կը բոլորէ միութենական աշխատանքի 60-ամեակը, որուն առիթով հրաժեշտի նամակ մը յղած է ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչական Ժողովին: Նոյն այս աննախադէպ առիթով «Տեղեկատու»ն հարցազրոյց մը ունեցաւ իր հետ, զոր պիտի կարդաք ամբողջութեամբ:

Այս տարեշրջանին առաջին ձեռնարկը Գահիրէի Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին պանծալի 20-ամեակի համերգն էր, որ մեծ խանդավառութեամբ ընկալուեցաւ ժողովուրդին կողմէ: Այս առիթով «Տեղեկատու»ի այս անգամուան հարցազրոյցին հիւրն է Մօ. Միհրան Ղազէլեան:

Այս շրջանին յատկանշական այլ ձեռնարկ մըն էր ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին կազմակերպած Ամառնային դպրոցը, որուն մասին կրնաք մանրամասն կարդալ մեր հանդէսին էջերուն:

Կարելոր ձեռնարկ մըն էր նաեւ Գահիրէի Համալսարանին Արեւելեան Լեզուներու Կաճառին կից Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին հիմնադրման 17-ամեակը, որ նշուեցաւ հայ եւ արաբ դասախօսներու մասնակցութեամբ կայացած սեմինարի մը ընթացքին:

Մանուկներն ալ անշուշտ ունեցան իրենց արդար բաժինը այս ձեռնարկներուն մէջ, Վարդավառի առիթով ամբողջ օր մը անցնելով Կոկանեան Սրահի պարտէզին մէջ, ջրային խաղերով եւ համեղ ուտեստով: Սպասելի է սակայն, որ նման ականդական-կրօնական առիթներու հաւաքներուն, խաղերը սկսելէ առաջ շատ կարճ ձեւով բացատրուի փոքրերուն առիթը, ուրկէ ծագում առած ըլլալը եւ սովորութեան արմատները: Բնական է որ փոքրիկներէն

մէկը հարցնէ՝ «Բայց ինչո՞ւ իրար կը ջրենք այս օրը»... Սպասելի է որ փոքրերուն հարցումները միշտ պատասխան ունենան, մանաւանդ մեր ականդութիւններուն պարագային:

Մեծ ուրախութիւն է մեզի համար տեսնել, որ շնորհիւ Աղեքսանդրաբնակ տիկին Անժիկ Յակոբեան-Կանիմեանի, Աղեքսանդրիոյ գաղութին կեանքը եւս իր ցուլացումը սկսաւ գտնել մեր հանդէսին էջերուն, հարստացնելով զայն: Հակառակ Աղեքսանդրիոյ գաղութին խիստ նուազած թիւին, այնտեղ ունինք քանի մը արուեստագէտներ, որոնք կարելոր ներդրում կ'ունենան գաղութին եւ երկրին՝ Եգիպտոսի կեանքին մէջ, ազդեցութիւն կը գործեն եգիպտացի արուեստագէտներու նոր սերունդին վրայ եւ բարձր կը պահեն եգիպտահայուն անունը:

Տիկին Անժիկ Յակոբեան-Կանիմեան «Տեղեկատու»ի այս թիւին կը մասնակցի քանի մը գրութիւններով, որոնք Աղեքսանդրիոյ ձեռնարկներուն կողքին կը ներկայացնեն նաեւ ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղին Ս. Չագըր Հիմնադրամին «Արխիւ» մատենաշարով (թիւ 5) լոյս տեսած «Որբուհիներուն Տուները Գահիրէ եւ Աղեքսանդրիա» հատորը:

Ուրախութեամբ նշենք նաեւ, որ ՀԲԸՄի Կեդրոնէն ներս յաճախ կ'ընդունինք այցելութիւնները Եգիպտոս այցելող հայերու, որոնք ծանօթանալով ՀԲԸՄիութեան աշխատանքներուն, գնահատանքով կ'արտայայտուին անոր մասին:

Գաղութին եւ այնտեղ ընթացող եռանդուն գործունէութեան համար գնահատանքի գիր մը ստացած ենք ԱՄՆի Ռոտ Այլընտ քաղաքը բնակող եւ «Մայրենի Հրատարակչութիւն»ի տէր եւ տնօրէն, դոկտ. Վաչէ Ղազարեանէն:

Այս տարեշրջանի մարզական կեանքը սկսաւ պասքէթպոլի Աղեքսանդրիոյ մրցաշարքով, Յուլիսի վերջաւորութեան: Ինչպէս միշտ, այս անգամ եւս տիկին Սօսի Ներետեան-Յակոբեան կը գրէ անոնց մասին:

Շնորհակալութիւն կը յայտնենք մեր սիրելի աշխատակիցներուն, իսկ մեր ընթերցողներուն կը մաղթենք շատ հաճելի եւ քիչ տաք ամառ մը:



## ՀԲԸՄԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Յարգելի ՀԲԸՄ շրջաններ, մասնաճիւղեր, գրասենեակներ, դպրոցներ եւ երիտասարդ մասնագետներ,

30 Մայիս 2024-ին ՀԲԸՄի նախագահ Պերճ Սեդրակեան յայտարարութիւն մը ըրաւ, Հայաստանի մէջ շարունակուող լարուածութեան մասին: Կը ներկայացնենք այդ յայտարարութիւնը.

«Հայաստան աւելի ու աւելի ճնշում կը կրէ երկրին ներսէն եւ դուրսէն՝ մտահոգութիւն յառաջացնելով, որ իր ընկերային կառուցուածքը կը քայքայուի աճող լարուածութեան եւ պառակտումի ծանրութեան տակ:

Այս շաբաթ շատեր խորապէս վրդոված էին օրինականութեան քայքայման վառ օրինակէն, երբ Հայաստանի ոստիկանութիւնը չարտօնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ընկերացող պատուիրակութեան, ամէն տարուան նման այցելել Սարդարապատի յուշահամալիր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. այցելել էր Սարտարապատի համալիր, ոգեկոչելու համար Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծումը եւ յաղթական ազատամարտին իրենց կեանքը զոհած նահատակներուն յիշատակը:

Սակայն պատուիրակութիւնը, պաշտօնապէս եւ անարգել կերպով մտնելու փոխարէն, արգիլուեցաւ ոստիկաններու կողմէ, առանց հիմնաւոր պատճառի:

Յետոյ երբ Նորին սրբութեան եւ պատուիրակութեան քանի մը անդամներու արտօնուեցաւ մուտքը, ոստիկանները այնպիսի անվայել կեցուածք ցուցաբերեցին, որ խարան դարձաւ հայերուս համար, ամբողջ աշխարհին առջեւ:

Երբ պետական պաշտօնեաները չեն յարգեր իրենց ազգային եկեղեցոյ բարձրագոյն իշխանութիւնը, ատիկա անարգանք կը դառնայ բոլոր հայերուն համար:

Ասիկա մեզի կը յուշէ, թէ պէտք է նոր եւ միասնական հաւատարմութիւն ցուցաբերենք մեր սկզբունքներուն եւ մեր ազգային եկեղեցոյ աւանդութիւններուն հանդէպ, որ հազարմեակներ շարունակ ծառայել է որպէս մեր ինքնութեան սիւնը, բոլոր հայերուն համար»:

### «ՏԵՂԵԿԱՏՈՒ»Ն ԲՈԼՈՐԻՆ

Վերջին շրջանին, կարգ մը ընթերցողներու եւ խմբագիրներու փափաքով, «Տեղեկատու»ն առցանց կը ղրկուի Հայրենիքի եւ Սփիւռքի հետեւեալ թերթերուն եւ հանդէսներուն.

- Էջմիածին, Մաշտոցի անուան Մատենադարան, Ազգային Գրադարան (Հայաստան)
- Ժամանակ, Մարմարա, Ակօս (Թուրքիա)
- Խօսնակ, Զարթօնք, Ազդակ, Արարատ, Հասկ (Լիբանան)
- Գանձասար, Հայեացք (Սուրիա)
- Ազատ Օր, Նոր Աշխարհ (Յունաստան)
- Նոր Յառաջ (Ֆրանսա)
- Օրեր (Չեքոսլովակիա)
- Պայքար, Հայրենիք, Նոր Օր, Ասպարէզ (ԱՄՆ)
- Ապագայ, Հորիզոն (Գանատա)

Արդ, եթէ մամլոյ վերոյիշեալ օրկանները բարեհաճին փոխադարձել իրենց ղրկուած մեր առցանց առաքումը, եւ առցանց օրինակ մը ղրկեն մեզի իրենց հրատարակութիւններէն, կարելի պիտի ըլլայ մեր համայնքը հետաքրքրող լուրեր քաղել անոնցմէ, ինչ որ կ'օգնէ համայնքներու փոխադարձ ճանաչումին:



## ՀՐԱԺԵՇՏԻ ՆԱՄԱԿ

Գաղութիս երեց անդամներէն եւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին եւ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին պատուոյ արենապետ Պերճ Թերզեան այս փարուան Մայիսին կը բոլորէ Միութեան մէջ իր գործունէութեան 60-ամեակը, որուն առիթով հրաժեշտի նամակ մը յղած է ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչական ժողովին: Նոյն այս աննախադէպ առիթով «Տեղեկափու»ն հարցազրոյց մը ունեցաւ իր հետ, զոր պիտի կարդաք ամբողջութեամբ:

Ստորեւ վերոյիշեալ նամակէն կը ներկայացնենք կարգ մը հատուածներ:

Գահիրէ, 12 Մայիս 2024

Մեծայարգ Տիար Պերճ Սեդրակեան,  
Նախագահ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական ժողովի  
Նիւ Եորք

Մեծարգոյ Տիար Նախագահ,  
Ներկայ նամակով կ'ուզէի ձեզի տեղեկացնել, թէ 9 Մայիս 2024-ին, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի կարգ մը անդամներ, գլխավորութեամբ իրենց արենապետ Տոքթ. Գէորգ Երզնկացեանի, 1963-ին Միութեան Եգիպտոսի մշակելի հողերուն գրաւման առիթով, փոխհատուցման վերանայուած գումարին վերջին մասնավճարը գանձեցին:

Զարմանալի զուգահէտութեամբ մը այս շաբթու մէջ կը լրանայ ստորագրեալիս՝ 6 Մայիս 1964-էն սկսող ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին անդամակցութեան 60-ամեակը:

Տարիներու ընթացքին գործակիցներուս հետ ունեցած սերտ յարաբերութիւններս սափարած են Միութեան Եգիպտոսի մարմիններուն ի նպաստ իրագործումներ կատարելու, որոնցմէ կարելի է յիշել Միութեան սեփականութիւնը եղող, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ Նուպար մարզարանի հողին վերաբերեալ 55 փարի տեսած օրինական հետապնդումները: Նոյնպէս կարելի է յիշել Միութեան մշակելի հողերուն գրաւման առթիւ բացուած դատին ամբողջ 59 փարի տեսած օրինական հետապնդումները եւ վերջապէս Գահիրէի ՀԲԸՄի նուիրուած Սաթենիկ Ճանիկ Չագրի կալուածին վերաբերեալ ամբողջ 12 փարի տեսած օրինական հետապնդումները:

Այս օրինական հետապնդումներուն յաջող ելքին մէջ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Վարչութեան եւ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի անդամներուն սերտ գործակցութեան կողքին, կարեւոր տեղ ունին Միութեան Նախագահին եւ Կեդրոնական Վարչական ժողովին անդամներուն ունեցած վստահութիւնը եւ զօրավիգը՝ հանդէպ Միութեան Եգիպտոսի շրջանակին:



\* \* \*

Այս առիթով կը փափաքիմ հրաժեշտ փալ Միութեան Եգիպտոսի շրջանակին, զանազան մարմիններու մէջ՝ անցնող 60 փարիներուն ընթացքին ինծի հետ գործակցած վարչականներուն: Նոյնպէս, հրաժեշտ կու փամ ձեզի եւ Կեդրոնական Վարչական Ժողովի բոլոր անդամներուն, միաժամանակ շնորհակալութիւնս կը յայտնեմ բոլորին՝ ստորագրեալիս Միութեան մէջ ունեցած գործունէութեան գնահատանքին համար:

Բոլորին կը մաղթեմ քաջառողջութիւն եւ գործերու յաջողութիւն:  
Լաւագոյն մաղթանքներով՝

**Պերճ Թէրզեան**

Պատուոյ Ատենապետ

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին  
եւ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին

**ԻՆՉ ՈՐ ԿՐՆԱՍ ԸՆԵԼ**

Կ'ըսուի թէ Կիպրոսի Արքարիա լեռան վրայ կը գտնուի Հռոմի կայսր Մարկոս Աւրելիոսի գերեզմանը, որուն վրայ արձանագրուած է հետեւեալը.

«Ինչ որ քաղցրութեամբ կրնայի ընել, չըրի խստութեամբ. ինչ որ խաղաղութեամբ կրնայի ընել, չըրի պատերազմով. ով որ կրնայի աղաչելով համոզել, չվախցուցի սպառնալիքով. որուն որ առանձին ճար կրնայի ընել, ուրիշներու առջեւ չյանդիմանեցի. ով որ կրնայի խրատով ուղղել, ձեծել չփորձի. մէկը չպատժեցի, որուն սկիզբէն երեք-չորս անգամ ներած չըլլայի. կը ցաւիմ պատժածներուս վրայ, եւ կ'ուրախանամ անոնց համար, որոնց ներեցի»:

**ԼԵՌՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ**

1939 թուականին Զէյթունի լեռներուն մէջ երկու որսորդներ եղնիկ մը կը հետապնդէին, երբ յանկարծ քարայրի մը մուտքին նկատեցին մերկ արարած մը, մինչեւ մէջքը հասնող մազ-մօրուքով: Սարսափած որսորդները կը պատրաստուէին կրակել այս արարածին վրայ, երբ լսեցին.

«Մի՛ կրակէք, ես ալ մարդ եմ ձեզի պէս»:

Որսորդները մարդուն Մարաշ կը փանին: Կը պարզուի որ հայ քահանայ մըն է՝ Տէր Յովսէփ Խուլմունեան. 1921-ին, երբ ֆրանսացիները կը հեռանան Կիլիկիայէն, զէյթունցիներու կռիւներուն ընթացքին քահանան կ'անհետանայ: Երեցկինը, որ Դամասկոս կ'ապրի, կը հաստատէ թէ այո, իր ամուսինն է, զոր մեռած կը կարծէին: Քահանան 18 փարի լեռներուն վրայ ապրեր է, բոյսեր եւ հափապարուղիներ ուրելով, որովհետեւ վստահօրէն համոզուած էր, թէ զէյթունցիները եր պիտի գան:



Մեր հանդիպումները

## 60 ՏԱՐԻ ՀԲԸՄԻ ՊԱՏՆԷՇԻՆ ՎՐԱՅ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆՆԻ հետ

**1. Ինչպէս կը բացատրէք Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին ձեր անդամակցութիւնը ամբողջ 60 տարիներ, երբ ՀԲԸՄԻ Ընդհանուր Կանոնագրով նախատեսուած պաշտօններ վարելու տարիքը 75 տարեկան է:**

**Պ. Թ.** 2013-ի Նոյեմբերին հասած ըլլալով ՀԲԸՄԻ Ընդհանուր Կանոնագրով նախատեսուած պաշտօններ վարելու տարիքային սահմանին, կանոնագրային պայմաններու կիրարկումով եւ «**ապահովելու համար հետագային գործունէութեան հեզասահ ընթացքը, Կեդրոնական Վարչական Ժողովը նպատակաշարժար դատած էր զիս Շրջանակային Յանձնաժողովի պատուոյ ատենապետ նշանակել եւ հրաւիրել որ, բացառութեան կարգով, շարունակեմ մասնակցիլ Յանձնաժողովի նիստերուն, մինչեւ որ ընթացիկ կարգ մը առկախ հարցեր իրենց բարեյաջող լուծումը գտնեն**»:

Այդ ընթացիկ առկախ հարցերուն լուծումը տեւեց տասը տարի՝ մինչեւ Մայիս 2024 թուականը, ինչ որ Շրջանակային Յանձնաժողովի անդամակցութիւնս երկարեց տասը տարիով, հասցնելով ծառայութեան տարիներս 60-ի:

Կենթադրեմ թէ այս պարագան եզակի երեւոյթ մըն է, եւ չեմ կարծեր որ ՀԲԸՄԻ աշխարհատարած մասնաճիւղերէն որեւէ մէկուն մէջ նման նախընթաց գոյութիւն ունի:

**Այս տարին՝ 2024-ը կը նշէ ձեր ՀԲԸՄիութեան մէջ ունեցած գործունէութեան 60-ամեակը: Կրնա՞ք պատմել թէ ինչ ընթացք ունեցած է այդ գործունէութիւնը:**

**Պ. Թ.** Ինչպէս անդամակցեցայ ՀԲԸՄիութեան:

Այդ օրուան թուականը՝ 4 Ապրիլ 1964, կը զուգահեռիպէր աշխարհահռչակ Ալեքսանտր Սարուխանի ազգային-գեղարւեստական 40-ամեակի նշումին, որ տեղի կ'ունենար բարձր հովանաւորութեամբ փոխվարչապետ, մշակոյթի եւ ազգային ուղղութեան նախարար դոկտ.

Ապտէլ Քատեր Հաթէմի: Հանդիսութիւնը կը վայելէր նախագահութիւնը երեք հայ յարանուանութիւններու պետերուն: Կազմակերպութիւնը յանձն առած էին Ա.Մ.Հ. Լրագրողներու Սենտիքան, Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահը, Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնը եւ Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւնը:

Նկատի ունենալով որ բազմաթիւ օտար հանգամանաւոր անձեր հրաւիրուած էին ձեռնարկին, յայտագիրը պիտի ներկայացուէր երկու լեզուներով, արաբերէն եւ հայերէն:

Այդ ժամանակ քիչեր կային, որոնք երկու լեզուներուն ալ հաւասարապէս կը տիրապետէին: Հետեւաբար, կազմակերպիչ յանձնախումբին որոշումով ինծի վիճակուեցաւ հանդիսավարութիւնը, որ յարաբերաբար երիտասարդ տարիքիս պատասխանատու պարտականութիւն մըն էր:

Հանդէսին վերջաւորութեան հաւաքուած էինք Վարպետին շուրջ եւ խօսակցութիւնը կը դառնար զինք շնորհաւորելու եւ ձեռնարկին յաջող անցնելուն մասին:

Ներկաներուն մէջէն մէկը խօսքը ինծի ուղղելով հարցուց, թէ կը փափաքիմ ՀԲԸՄԻ Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովին անդամ ըլլալ:

Դժբախտաբար այդ անձը չեմ յիշեր եւ չեմ ալ յիշեր թէ ո՞վ դրած էր թեկնածութիւնս Յանձնաժողովին անդամակցութեան:

Արդարեւ, ես գործունէութիւն մը չունէի ՀԲԸՄԻ մէջ, ոչ ալ անոր անդամակցած էի, բացի Գուպպէի մէջ գործող ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ սկաւուտական խումբէն, որուն մասնակցած եմ կարճ ժամանակ:

Շատ չանցած ստացայ Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովէն 15 Յունիսին իրենց գումարելիք ժողովին հրաւերը, որուն մէջ յիշուած էին թեկնածու անդամներուն անունները, բոլորն ալ 20-30 տարիով ինձմէ աւելի երէց, բացառութեամբ տոքթ. Հանրի Բետերեանի, որ միւսներէն աւելի երիտասարդ էր եւ այդպէս ալ չըն-



դառաջեց իրեն եղած հրաւերին եւ չանդամակցեցաւ Յանձնաժողովին:

Կը յիշեմ երբ ժողովի նիստին մասնակցելու ներկայացայ որոշեալ ժամուն, զգացի որ ներկաները զարմանք եւ թերահաւատութիւն արտայայտող նայուածքով զիս ընդունեցին:

Անշուշտ ոչ ես գիտէի եւ ոչ ալ ներկաները, թէ այդ առաջին ժողովին հետեւող 60-ամեայ տեւողութեամբ գործունէութիւն մը կը սպասէր զիս ՀԲԸՄիութենէն ներս:

\*\*\*

Երբ սկսայ կանոնաւոր կերպով ներկայ գտնուիլ Յանձնաժողովի նիստերուն, քննուած սովորական նիւթերուն կողքին ժողովին կը ներկայացուէին երկու քրոնիկ հարցեր.

1-1963-ի թիւ 15 օրէնքով կ'արգիլուէր օտարահպատակներուն մշակելի հողերուն ենալ երկրէն ներս, եւ այս ուղղութեամբ Միութեան մշակելի գրաւեալ հողերուն փոխհատուցումի հարցը:

2-Հելիոպոլսոյ մէջ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ համար 1956-ին երկու անջատ պայմանագրերով գնուած հողերուն վերջնական պայմանագիրը ստորագրելու խոչընդոտները եւ զանոնք բառնալու աշխատանքները:

**Ինչպէս սկսած էք այդ գործունէութեան. եղած են անձ մը կամ անձեր, որոնք մղած են ձեզ, կամ որոնց օրինակին ուզած էք հետեւիլ:**

**Պ. Թ.** Մասնաւոր անձ մը կամ անձեր չեն եղած, որոնք իրենց գործունէութեամբ օրինակ եղած են ինծի:

Խնդիրը այն է, որ փոքր տարիքէս միտում կամ յատուկ փափաք ունեցած եմ մերձաւորներու օգտակար ըլլալու: Մարդիկ ինծի պարտականութիւններ յանձնած են, որոնց ճշգրիտ կատարումը գոհացում տուած է իրենց: Ժամանակի թաւալումով հետզհետէ աւելի ծանր պարտականութիւններ ստանձնած եմ:

Ազգային-հասարակական գործունէութեանս մարզերը կարելի է բաժնել հետեւեալ ձեւով՝

-«Արեւ» օրաթերթը եւ անոր գործակից միութիւնները,

-ՀԲԸՄի շրջանակը եւ անոր առնչուող

մարմինները,

-Գահիրէի Թեմական եւ Քաղաքական ժողովները եւ անոնց հովանաւորութիւնը վայելող հոգաբարձութիւնները եւ յանձնախումբերը:

-Հայաստանի անկախութենէն եւ Սաթենիկ Չագըր հիմնադրամի ստեղծումէն յետոյ, սերտօրէն գործակցած եմ ՀՀի Գահիրէի դեսպանատան եւ հայրենի տարբեր կրթական եւ մշակութային կառոյցներու հետ:

ՀԲԸՄի մէջ գործունէութեանս մասին պէտք է ըսեմ, թէ սկիզբը Շրջանակային Յանձնաժողովին խորհրդական անդամ եղած եմ, յետոյ՝ փոխ գանձապահ, ապա՝ փոխ ատենապետ եւ հուսկ 1988-էն սկսեալ՝ ատենապետ: Նոյնպէս մասնակցեր եմ Գահիրէի ՀԲԸՄի զանազան յանձնախումբերուն եւ վարչութիւններուն եւ ատենապետը եղած եմ այդ վարչութեան 1992-2002:

2007ին Տեղական Մասնաճիւղին ընդհանուր ժողովը զիս ընտրած է պատուոյ ատենապետ: Նոյնպէս Կեդրոնական Վարչական ժողովը 2011ին զիս նշանակած է ՀԲԸՄի պատուոյ անդամ: Ասկէ զատ Կեդրոնական Վարչական ժողովը զիս նշանակած է Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի պատուոյ ատենապետ:

**2. Կրնա՞ք յիշել գոնէ մէկ քանին այն ձեռնարկներէն, որոնց ետին դուք կեցած էք եւ որոնք յաջողութեամբ պսակուած են:**

**Պ. Թ.** Յիշեցումի կարգով կարելի է նշել երեք պարագաներ.

Ա. Բարերարուհի Սաթենիկ Ճանիկ Չագըրի մասին Գահիրէի ՀԲԸՄի նուիրած կալուածը (4017 քառ. մ. տարածութեամբ եւ վրայի շինութիւններով):

Բարերարուհին կալուածը նուիրած էր 1976ին եւ շիջեցաւ 1982ին:

Կալուածին վրայ կային բազմաթիւ ոտնձգութիւններ եւ խոչընդոտներ:

Գահիրէի ՀԲԸՄի վարչութիւնը այդ բոլոր դժուարութիւնները դիմագրաւեց եւ 12 տարի տեւող օրինական հետապնդումներէ յետոյ, բարերարուհիին շիջումէն 12 տարի վերջ յաջողեցաւ կալուածին մասնակի վաճառքով գոյացնել շուրջ 16 միլ-





իոն Ե. Ո. դրամագլուխով ՀԲԸՄի Սաթենիկ Չագրը հիմնադրամը, որուն եկամուտները կ'օգտագործուին ըստ հիմնադրամի կանոնագրին մէջ նախատեսուած պայմաններուն:

Ասկէ զատ, նոյն կալուածին վրայ գտնուող բարերարուհիին մենատունը վարձուեցաւ ՀՀ Գահիրէի դեսպանատան:

Բ. Երկրորդ պարագային կարելի է յիշել Միութեան գրաւեալ մշակելի հողերը, որոնք նուիրուած էին բարերար Գրիգոր Մէօթեմէտեանէ (21 ֆէտան մշակելի հող) եւ բարերար Լեւոն Պէյ Յակոբեանէ (641 ֆէտան մշակելի հող), որոնք պետական գրաւումի ենթարկուեցան 1963-ին թիւ 15 օրէնքով, որ կ'արգիլէր օտարահապատակներուն մշակելի հող ունենալը:

Այս հողերուն վերաբերեալ փոխ հատուցումին համար օրինական հետապնդումները տեսցին 1963-2022, ամբողջ 59 տարիներ:

Այս օրինական հետապնդումներուն արդիւնքը եղաւ փոխ հատուցումի նախնական գումարին (144,000 Ե.Ո.) հսկայական բարձրացումը (157 միլիոն Ե.Ո.):

Գ. Որպէս երրորդ պարագայ կարելի է յիշել 1956-ին նախնական վաճառքի երկու պայմանագրերով գնուած 6030 քառ. մ. տարածութեամբ Միութեան սեփականութիւնը եղող Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանին տրամադրուած հողը:

Այդ հողին պաշտօնական արձանագրութիւնը անդամալուծուած էր քաղաքական պատճառներու բերումով, եւ հողին վաճառորդներուն երկրէս դէպի զանազան արտասահմանեան ոստաններ մեկնումով եւ այդ տեղերը կայք հաստատելով, կարելի չէր գնուած հողը Միութեան անունին արձանագրել:

Սակայն շնորհիւ Շրջանակային Յանձնաժողովի անդամներուն թափած անդուլ ճիգերուն, ի վերջոյ կարելի եղաւ 2011-ին, 55 տարի վերջ հողը Միութեան անունին արձանագրել:

55 տարիներ այս դժուար իրագործումներուն յաջող ելքը կարելի եղաւ շնորհիւ ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի վարչութեան եւ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի անդամներուն սերտ գործակցութեան:

### **3. Գիտենք նաեւ որ հեղինակ էք գրեթէ երկու տասնեակ գիրքերու, բոլորն ալ առնչուած եգիպտահայ գաղութի կեանքին: Կրնա՞ք ըսել, թէ ինչպէ՞ս ծնաւ առաջին գիրքին գաղափարը:**

**Պ. Թ.** Ճշգրիտ ըլլալու համար պիտի ըսեմ, որ մինչեւ հիմա 16 գիրք եւ գրքոյկ հրատարակած եմ, որոնց առաջինը արաբերէն եղած է, իսկ մնացեալ 15-ը՝ հայերէն:

Ինչպէս սկսած եմ գիրքեր եւ գրքոյկներ հրատարակել.

1977-էն սկսեալ անկանոն հերթակա-նութեամբ կ'աշխատակցէի «Արեւ» օրաթերթին: 1998-էն սկսեալ «Արեւ» օրաթերթը սկսաւ հրատարակել արաբերէն ամսօրեայ յաւելուած մը, որուն խմբագիրն էր դոկտ. Մոհամէտ Րիֆ'աթ Էլ Իմամ: Յաւելուածին խմբագրին պնդումով սկսայ գրել արաբերէն:

Յաւելուածին մէջ յօդուածներս լոյս կը տեսնէին որպէս առաջնորդող յօդուած:

Ժամանակի ընթացքին գրած յօդուածներուս թիւը հասաւ 40-ի:

Այս անգամ յաւելուածին խմբագիրը սկսաւ զիս համոզել, թէ այս առաջնորդող յօդուածները հարկ է գիրքի մը մէջ հրատարակել:

Վերջապէս այդ գիրքը լոյս տեսաւ 2008-ին, «Եգիպտահայ Հայեացքներ Պատմութեան, Քաղաքականութեան եւ Մշակութային Ժառանգութեան Մասին» խորագրով (արաբերէն խորագիրն է «Րուա Արմանիյա-Մասրիյա Ֆիլոսոփիա Ուալիասա Ուալոդուրաս»), որ իր 306 էջերուն մէջ կը պարփակէր տուեալ 40 առաջնորդող յօդուածները:

Այս պարագան մղեց զիս մտածելու, թէ ինչո՞ւ հայերէն գրուած յօդուածներս ալ չհրատարակեմ գիրքով:

Այդ գիրքը հրատարակուեցաւ 2010-ին, «Յետադարձ Անդրադարձ» խորագրով, որ կը պարփակէր 79 գրութիւն:

Այս առաջին հայերէն հատորին լոյս ընծայումէն վերջ տարբեր նիւթերու շուրջ հրատարակած եմ մնացեալ 14 գիրքերը եւ գրքոյկները, որոնց բովանդակութիւնը կ'ընդգրկէ եգիպտահայ առօրեան եւ համահայկական հետաքրքրութիւն առթող նիւթեր:



## ՊԱՆԾԱԼԻ 20-ԱՄԵԱԿ ՄԸ

Հայրենիքէն հեռու, սփիւռքի գաղութներէն մէկն ու մէկուն մէջ, երբ միութիւն մը, կազմակերպութիւն մը կամ մանաւանդ արուեստի խումբ մը իր 20-ամեակը կը տօնէ, երեւոյթը կը դառնայ հաստատագիր մը տուեալ խումբին հայ մշակոյթին հանդէպ ունեցած հաւատքին, անոր ծառայելու կամքին եւ սփիւռքահայ կեանքին դժուար գոյութիւնը ամուր հիմերու վրայ պահելու համոզումին:

Իսկ երբ նման 20-ամեակ մը կը դառնայ նաեւ վայրը Սփիւռքի համար այնքան էական եւ անհրաժեշտ սերնդափոխութեան, ներկայութեամբ յոյժ մը նոր եւ մատղաշ ոյժերու, որոնք եկած են մաս կազմել խումբին, այն ատեն իրապէս տօնահանդէս կը դառնայ ելոյթը:

Նման հաւատքի մը տօնախմբութիւնն էր Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին յոբելենական համոյթը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 24 Մայիս 2024-ի երեկոյեան, Պըլըքտանեան սրահէն ներս, թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի բարձր հովանաւորութեամբ:

Բացման խօսքով հանդէս եկաւ տիկին Նորա Քէօհնէլեան:

Գեղարուեստական ղեկավար եւ խմբավար Միհրան Ղազէլեանի ղեկավարութեամբ երգահանդէսը, իր բազմազան, նոր եւ հաճելի երգացանկով մեծ խանդավառութեամբ լեցուց ներկաները, որոնք իրենց խանդավառութիւնը արտայայտելու համար չխնայեցին իրենց ծափողջիւնները:

Ուշադրութեան եւ մեծ գնահատանքի արժանի էին վեց մենակատարները, որոնց առաջին բեմելն էր «Արաքս»ի այս ելոյթը՝ Կրէթթա Էսմէրեան, Մակի Մակէտ (կը բացակայէր), Մարալ Մանուկեան, Նաթաշա Բախշանեան, Նատա Ղազարեան եւ Բաֆֆի Սարկաւազ Պօղոսեան:

Քսանվեց երգիչ-երգչուհիները լաւագոյնը տուին իրենց վստահուած երգացանկի կատարումին մէջ, մէկ ու կէս ժամուան ընթացքին:

Համերգի աւարտին Եգիպտահայոց Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբազան Մնացականեան արտայայտեց իր գնահատանքի ջերմ խօսքը երգչախումբին, անոր անդամ-անդամուհիներուն, մասնաւորապէս շեշտելով խմբավար Միհրան Ղազէլեանի մեծ դերն ու ներդրումը երգչախումբին բազում յաջողութիւններուն մէջ: Ապա Քաղաքական Ժողովի ատենապետ տիար Վահէ Բլատեան խմբավարին յանձնեց գնահատանքի յուշանուէր մը, անոր 20-ամեայ գործունէութեան եւ «Արաքս» երգչախումբին 20-ամեակին բարեբաստիկ առիթներով:

Իրապէս գնահատանքի արժանի է նաեւ ելոյթին ընկերացող գրքոյկը (պատրաստուած խմբավար Միհրան Ղազէլեանի կողմէ եւ ձեւաւորուած Շահէ Լուսարարեանի հմտութեամբ), որ ամփոփ տեղեկագիր մըն է կարծես «Արաքս» երգչախումբին քսան տարիներու աշխատանքին:





Գրքոյկը կը բացուի Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի օրհնութեան գիրով եւ գնահատանքի խօսքով, որուն մէջ կ'ըսէ.

«... Մեր սրտի ջերմ խօսքն ու գնահատականը կը բերենք երգչախումբի ներկայի եւ նախկին բոլոր անդամ-անդամուհիներուն, մենակատարներուն եւ նուագակիցներուն: Կը գնահատենք յատկապէս անոնց սիրայօժար կամքը, զոհողութիւնները եւ ինքնակատարելագործման հանդէպ իրենց պատրաստականութիւնը...»:

«Մեր գնահատականն ու մասնաւոր շնորհակալութիւնները կը յայտնենք Աօ. Միհրան Ղազէլեանին, որ հաստատ համոզումով եւ անշեղ հաւատով լծուեցաւ գործին, եւ իբրեւ խմբավար եւ գեղարուեստական ղեկավար կեանքի կոչեց բազմանդամ ու որակեալ քառաձայն երգչախումբ ունենալու մեր բոլորիս փափաքը: Անոր մասնագիտական կարողութիւնները, համբերատարութեան ոգին, սերն ու յարգանքը դէպի իւրաքանչիւր

անդամը, ինչպէս նաեւ նախանձախնդիր ու պատասխանատու մօտեցումը իւրաքանչիւր կատարումին եւ ձեռնարկին, եղան յաջողութեան եւ ձեռքբերումներուն հիմնական գրաւականը»:

Գրքոյկը կը պարփակէ, յայտագրին եւ տարիներու վրայ երկարող ելոյթներէն առնուած բազմաթիւ լուսանկարներու կողքին, «Արաքս» երգչախումբի ծննդոցին եւ քսան տարուան անցած ուղիին պատմականը, համերգներու ամբողջական ցանկը, մեներգներու եւ համոյթային կատարումներու ցանկը, համերգային ամբողջ երգացանկը, եւ «Արաքս» երգչախումբին հիմնադրութեան օրէն անոր մաս կազմած անդամներուն ցանկը:

Գրքոյկ մը, որ իր մէջ կը խտացնէ եգիպտահայ գաղութին կարեւոր բաղադրիչներէն մէկուն՝ «Արաքս» երգչախումբին պատմականը, եւ առ այդ արժանի է տեղ գտնելու մեր գրադարաններէն ներս:

Բարի երթ «Արաքս»ին դէպի յաջորդ հանգրուան:





## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ



Կիրակի, 26 Մայիս 2024-ին բարեբախտութիւնը ունեցանք ՀԲԸՄԻ Գահիրէի Կեդրոնէն ներս ընդունելու այցելութիւնը ամերիկաբնակ բժիշկ եւ տիկին Ճոն եւ Սօսի Պալեաններուն, որոնք քաղաքս կը գտնուէին իրենց երեք մանչերէն երկուքին հետ:

Մեր հիւրերը նախ այցելեցին Կեդրոնի գետնայարկին վրայ գտնուող Պերճ Թէրզեան ժողովասրահը, ապա Վիգէն Ճիզմէճեան արխիւն ու Երուանդ Աղաթօն գրադարանը:

Անոնք մեծ ուշադրութեամբ դիտեցին արխիւը, ծանօթացան նիւթերուն եւ հարցումներով յագեցուցին իրենց հետաքրքրութիւնը:

Տորթ. Ճոն Պալեան գործադիր գլխաւոր տնօրէնն է ClinChoice ընկերութեան, որ խորհրդատուական ծառայութիւններ կը մատուցէ առողջապահական ոլորտէն ներս: 2015-ին այս ընկերութիւնը Երեւանի մէջ մասնաճիւղ մը բացած է, 400-է աւելի աշխատողներով: Իսկ 2019-ին սկսեւ է աշխատիլ DataFoundry.ai ընկերութիւնը: «Ճոն եւ Սօսի Պալեան հիմնադրամ»ը

նախաձեռնած է Երեւանի մէջ հիմնել Biotechnology & IT Incubation Center հաստատութիւնը:

Այցելութեան աւարտին տորթ. Ճոն Պալեան Աղաթօն գրադարանին նուիրեց 2011 թուականին լոյս տեսած իր հեղինակած “Gray Wolves and White Doves” վէպին հայերէն թարգմանութիւնը՝ «Գորշ Գայլեր եւ Սպիտակ Աղանիներ», 2022-ին Երեւան տպուած հատորը:

Շնորհակալութիւն յարգելի ամոլին այցելութեան եւ իրենց նուիրած գիրքին համար:

\*\*\*

Ուրբաթ, 19 Յուլիս 2024-ին Միութեանս կեդրոնը այցելեց Գահիրէի Համալսարանի Արաբական Գրականութեան Կաճառի դոկտոր փրոֆ. Ֆըրի Շաքէր, ծանօթացաւ Աղաթօն գրադարանին, հարցումներ ուղղեց գիրքերուն մասին, ապա ծանօթացաւ Վ. Ճիզմէճեան արխիւասրահին եւ գնահատեց կատարուած աշխատանքը:

Շնորհակալութիւն յարգելի դոկտորփրոֆէսորին, իր այցելութեան համար:



## «ԱՐՄԱՏ» ԳԱՐՈՒՆ 2024

ՀԲԸՄիության Կեդրոնական գրասեն-  
եակը հաճոյքով կը յայտարարէ Արմատ  
2024-ի նոր՝ «Գարուն 2024» ծրագիրնե-  
րուն սկիզբը, խթանելով որ մասնակցի  
փափաքողները արձանագրեն իրենց  
անունները, կապուելու եւ հաղորդակցե-  
լու համար աշխարհի տարբեր երկիրնե-  
րու մէջ գտնուող իրենց տարեկիցներուն  
հետ, հայկական պարերուն, հայկական  
ճարտարապետութեան կոթողներուն եւ  
հերոսներուն ընդմէջէն:

Ինչպէս միշտ, այս անգամ եւս հանդի-  
պումները տեղի պիտի ունենան Կիրակի  
օրերը, Մարտ 10, 17, Ապրիլ 14, 21 եւ Մայիս  
19, 26-ին եւ պիտի ընթանան անգլերէն  
լեզուով:

Մասնակցութեան արձանագրութեան  
համար խնդրուի կապուիլ հետեւեալ հաս-  
ցեով. <https://agbu.org/armat-register>

ՀԲԸՄի «Արմատ» ծրագիրը կը յայտա-  
րարէ իր 2024ի գարնան եղանակին յա-  
ջող աւարտը: Այս եղանակին ծրագիրը  
խմբած էր հայաշխարհի պատանիները  
խորամուխ ըլլալու հայ մշակութային ժա-  
ռանգութեան հարուստ հիւսուածքին մէջ:

Այս եղանակին համար արձանագրուեր  
էին 93 պատանիներ, որոնցմէ 82-ը գործ-  
նական մասնակցութիւն ունեցան երեք  
հանդիպումներուն, աշխարհի տարբեր  
երկիրներէն, ինչպէս՝ Արժանթինէն, Հա-  
յաստանէն, Գանատայէն, Եգիպտոսէն,  
Իտալիայէն, Իրանէն, Յորդանանէն,  
Քուէթէն, Լիբանանէն, Զուիցերիայէն,  
Սուրիայէն, Թուրքիայէն, ԱՄՆէն, Մեծն  
Բրիտանիայէն եւ Արաբական Էմիրու-  
թիւններէն:

Առաջին հանդիպումը տեղի ունեցած  
է 17 Մարտին, «Lorke together» խորագ-  
րով, որուն ընթացքին մասնակիցները  
ծանօթացեր են հայկական աւանդական  
պարերուն՝ Քոչարի, Բերդ, Յարխուշտա,  
Թամզարա եւ Լորքէ:

Հրաւիրուած մասնագէտ պարուիի Մե-




լինէ Առաքելեան, ՀԲԸՄի Նորքի մանկա-  
կան կեդրոնի իր սաներուն՝ Միլենա եւ  
Սամուէլ Ասրեաններուն հետ ներկայա-  
ցուցեր է Լորքէ պարը եւ բացատրեր հայ-  
կական պարերուն բնոյթը:

Երկրորդ հանդիպումը, որ տեղի ունե-  
ցեր է Ապրիլ 21-ին, կը կրէր «The Marvels  
Within the Walls» խորագիրը, կը ներկա-  
յացնէր Հայաստանի ճարտարապետու-  
թեան կարելորագոյն վայրերը՝ Խոր Վի-  
րապ, Հաղարծին, Գեղարդ եւ Նորավանք:  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն Տ. Գարե-  
գին Համբարձումեան յատկապէս հրա-  
ւիրուած է այս հանդիպումին, բացատ-  
րութիւններ տալու համար պատանինե-  
րուն քրիստոնէական վայրերու նշանա-  
կութեան եւ պահպանումին մասին: Սղոց  
խաղին միջոցով, պատանիները առեր են  
ճարտարապետներու դերը, բացայայտե-  
լու համար անոնց կատարած աշխատան-  
քը եկեղեցաշինութեան մէջ:

Երրորդ հանդիպումը, որ կը կրէր «Փառք  
քաջութեան եւ Արիութեան» խորագիրը,  
տեղի ունեցեր է 26 Մայիսին, որուն ըն-  
թացքին յարգանքի տուրք մատուցուեր  
է հայ զօրավար Անդրանիկ Օզանեանի,  
Գարեգին Նժդեհի, Մոնթէ Մելքոնեանի  
եւ Սօսէ Մայրիկին: Մասնակիցները ձե-  
ռային աշխատանքներով արտայայտեր  
են իրենց ապրումները այս հերոսներուն  
հանդէպ եւ իրենց գծագրութիւնները ներ-  
կայացուցեր են իրենց ընկերներուն:

«Արմատ»ի գարնան եղանակի ծրագի-  
րը իրապէս յաջողութիւն ունեցաւ եւ մաս-  
նակիցներու հոգիներուն մէջ ամրագրեց  
հայկական մշակոյթին, պատմութեան եւ  
ժառանգութեան հանդէպ իմացումն ու  
հաւատքը:

«Արմատ»ի ծրագիրներուն միջոցով  
հայ պատանիները իրարու կը ծանօթա-  
նան եւ միասին հաճելի ժամանցի ընդմէ-  
ջէն հասու կը դառնան մեր մշակոյթին եւ  
պատմութեան:





## ՀԲԸՄԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ

Յաջողության բանալին յարատև աշխատանքն է եւ աւելին՝ հաւատքը այդ աշխատանքին հանդէպ:

Ամբողջ գաղափարը ծնունդ առաւ, երբ ՀԲԸՄԻ երկու վարչութիւններով հաւաքուած էինք պր. Պերճ Թէրզեանի տան մէջ ու հոն նիւթ դարձաւ անոր դեռ չիրականացած՝ Գահիրէի մէջ արեւմտահայերէնի ուսուցման հիմնարկ մը հիմնելու երազանքին մասին: Այդ ընթացքին քովս նստած էր Արփի Խաչերեանը ու մենք երկուքով սկսանք խօսիլ նոր սերունդին հետ աշխատելու եւ անոր մէջ հայկական ոգին զօրացնելու անհրաժեշտութեան մասին, բայց ինչպէս կարելի էր ստեղծել հետաքրքրական միջոցներ գրաւելու այսօրուան երեխան, որ տունը նստած՝ պզտիկ գործիքով մը աշխարհը բաց է իր դիմաց: Եւ յանկարծ մտքիս մէջ ծագեցաւ ամառնային դպրոցի գաղափարը եւ առիթէն օգտուելով ուղղակի Արփիին հարցուցի, թէ պատրաստ է ինծի օգտակար դառնալու այս ծրագրին մէջ, եւ իր «այո»-ն զիս առաջ մղեց քայլ մը առնելու դէպի լուսաւոր այս գաղափարը, որ առաջին անգամ ըլլալով պիտի իրագործուէր ՀԲԸՄԻ հովանիին տակ:

Համոզուած ըլլալով, որ այսպիսի ծրագիր մը յաջողցնելու համար հարկ էր ունենալ կարող ու փորձառու մարդիկ: Առաջարկս Շրջանակային Յանձնաժողովի կողմէն ընդունուելէն ետք, անմիջապէս գործի անցայ խումբս կազմելու: Հայերէն լեզուի եւ երաժշտութեան ուսուցման համար դիմեցի տիկ. Սեւան Սեմերճեանին, որ մեր ծրագրին մաս կազմելու իր պատրաստակամութիւնը յայտնելէն ետք, իրարայայօրդ առաջարկներս ըրի հետեւեալներուն. տիկնայք՝ Ռուպինա Ասլանեան, Մարալ Մանուկեան, Անճըլ Սիւլահեան, Մարինա Սուսու, Գարին Աւագեան, Սիւզի Քիրքեան, եւ Ինկրիտ Եանըզեան, տեսքը՝ Խաչիկ Գասապեան, Գեղամ Կարսեան եւ Արթո Պըլըք-տանեան:



Քանի մը հերթական հանդիպումէ ետք, ծրագիրը դրուեցաւ եւ գործերը բաժնուեցան: Ժողովը որոշեց ամառնային դպրոցի տեղութիւնը ըլլայ Մայիս 27-էն Յունիս 27, շաբաթը չորս օր, երկուշաբթիէն Հինգշաբթի, 7-12 տարեկան երեխաներու համար:

Անկեղծ ըլլալու համար, առաջին օրը փորձ մըն էր բոլորիս համար, քանի որ ՀԲԸՄԻ կեդրոնը այնքան ալ պատրաստուած չէ օրական 5 ժամ 35 երեխայ ընդունելու համար, սակայն իւրաքանչիւր դասատու, աշխատող կամ պատասխանատու ձեռք-ձեռքի տալով, զիրար լսելով ու օգնելով անկարելին ըրինք կարելի՛ այս ծրագիրը յաջողցնելու համար: Բոլորիս նպատակը մէկ էր՝ կարճ ժամանակամիջոցի մէջ օգտակար գիտելիքներով հարստացնել մեր փոքրիկները առաւելապէս կեդրոնանալով հայերէնին ու հայկականին վրայ:

Օրը սկսաւ «Չագըր» սրահին մէջ, երեխաներուն, դասատուներուն ու երիտասարդ օգնականներուն ներկայութեամբ: Բարի գալուստ մաղթելէ ետք, հակիրճ ծանօթացում մը եղաւ ՀԲԸՄԻ պատմութեան, որմէ ետք երեխաները երկու խումբի բաժնուեցան:

Դպրոցի առօրեայ ծրագիրը բազմազան էր, հայերէն լեզուի կողքին կային նաեւ անգլերէն լեզուով հաճելի խաղեր ու թատերական փորձեր, ձեռնային աշխատանք, երգ, գծագրութիւն, մարզանք, եգիպտաբանութիւն, ճատրակ, շտապ օգնութիւն, համակարգիչի եւ խոհարարութեան պահեր եւ ընդհա-





նուր զարգացման մրցումներ:

Դասաւանդութեան կողքին, ամառնային դպրոցի 4 շաբաթներու ընթացքին ունեցանք 4 պտոյտներ. առաջինը՝ դէպի Եգիպտոսի Ազգային թանգարանը, ուր փոքրիկները մասնակցեցան “Carpe Diem”-ի պատրաստած գանձարշաւին: Երկրորդ պտոյտը՝ դէպի “Kidzania”. փոքրիկներուն ամենասիրած խաղավայրերէն մէկը, ուր ծանօթացան գանազան արհեստներու եւ մասնագիտութիւններու եւ առիթը ունեցան զանոնք անձամբ փորձելու: Պտոյտներուն ամենայատկանշականը եղաւ “Etalex” ընկերութեան գործարանը, որուն սեփականատէր պր. Վարդ Ալեքսանեանը՝ անձամբ, իր թոռնիկին՝ Արմէնին հետ, մեր խումբը դիմաւորեց գործարանի մուտքին: Մէկ ժամուայ շրջապտոյտի ընթացքին փոքրիկները ծանօթացան մարզական մրցաշարքերուն յատկացուած բաժակներու եւ մետալներու պատրաստութեան գործընթացին: Գործարանի տնօրէն՝ պր. Պերճ Աւետիսեանի կողմէն պատրաստուած հարցամրցումին 3 մանուկներ նուէրներ ստացան: Այցելութիւնը աւարտեցաւ պատշաճ հիւրասիրութեամբ:

ՀԲԸՄի կազմակերպած ամառնային դպրոցը չէր կրնար աւարտիլ, առանց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբի այցելութեան: Վերջին օրուան յայտագիրը ամբողջովին կազմակերպուած էր միութեանս երիտասարդներուն կողմէ, որոնք դպրոցի ամբողջ տեւողութեան ընթացքին միշտ ներկայ էին մեր մանուկները հսկելու եւ անոնց օգտակար դառնալու համար: Հոս անհրաժեշտ է յիշեմ անոնց անունները. Մարիա Տրդատեան, Գարէն Տրդատեան, Լիա Նիկողեան, Արեգ Սիմոնեան, Սեւան Պալթայեան: Նաեւ ունէինք դպրոցական օգնականներ՝ Մարալ Մանուկեանն ու Լուսին Լուսարարեանը:

Վերջին օրուան առթիւ տեղի ունեցաւ վկայակագրերու բաշխում, որմէ ետք երեխաները զուարճացան ջրային, մարզական ու մտային հաճելի խաղերով ապա՝ ճաշեցին



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի պարտէզին մէջ: Այս արարողութեան մասնակից՝ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ՝ տոքթ. Գէորգ Երզնկացեանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր աշխատողներուն իրենց նուիրեալ գործին համար:

«Միութիւնը Զօրութիւն է». Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նշանաբանը սկզբունք առնելով ոտքի ելանք ու անգամ մը եւս յաջողեցանք հաստատել մեր հիմնադիրներուն տեսլականը:

Կը շնորհաւորեմ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը՝ դաստիարակչական եւ օգտաշատ այս ծրագրի նախձեռնութեան համար:

Շնորհակալութեան յատուկ խօսք Կոկանեան Սրահի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի զոյգ վարչութիւններուն՝ իրենց արդիւնաւետ համագործակցութեան համար:

Վերջապէս, Յանձնաժողովիս ու իմ անունով շնորհակալութիւն կը յայտնեմ իւրաքանչիւր անհատի, որ օգտակար դարձաւ այս ծրագրի յաջողութեան: Հաւաքական նուիրումով ու պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, միասնաբար կրցանք իրագործել այս յաջողութիւնը:

Նորանոր յաջողութիւններ մեր սիրելի ՀԲԸՄիութեան:

*Լալա Շամամեան-Նիկոլեան*







## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻՆ

Ուրբաթ, 26 Յուլիս 2024-ի առաւօտեան ժամը 11-ին հոգեհանգստեան պաշտօն կատարուած է ՀԲԸՄիութեան մեծ բարերարուհի Սաթենիկ Չագըրի հոգին:

Սաթենիկ Թոփալեան-Չագըր, իր հոր՝ Գեորգ Թոփալեանի եւ ամուսնոյն՝ Ճանիկ Հայկ Չագըրի հետ թաղուած է Աղեքսանդրիոյ գերեզմանատան մատուռին ներքնայարկին մէջ:

Հոգեհանգստեան արարողութեան ներկայ եղած են ՀԲԸՄիութեան Գահիրէի Մասնաճիւղի ատենապետը՝ դոկտ. Ճորճ Սիմոնեան եւ վարչութեան անդամ-անդամուհիները:

Յարգանքով եւ երախտագիտութեամբ կը յիշենք մեծ բարերարուհին, որուն բարիքը կը վայելենք մինչեւ այսօր:

Սաթենիկ Չագըրի յիշատակը անմար մնայ մեր բոլորին հոգիներուն մէջ:



## 17-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գահիրէի Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին հիմնադրութեան 17-ամեակին առիթով, հանդիպում-քննարկում մը տեղի ունեցած է, կազմակերպութեամբ Գահիրէի Համալսարանին եւ Հայագիտական Կեդրոնին, Երկուշաբթի, 8 Յուլիս 2024-ի կէսօրուան ժամը 1-ին, Գահիրէի Համալսարանին Արեւելեան լեզուներու Կեդրոնին մէջ:

Այս հանդիպում-քննարկումին ելոյթներով մասնակցեր են դոկտ. Ճորճ Սիմոնեան, դոկտ. Մոհամէտ Սալէի եւ դոկտ. Մոհամէտ Րիֆ'աթ:

Հանդիպում-քննարկումը կը վայելէր հովանաւորութիւնը Գահիրէի Համալսարանի նախագահ դոկտ. Մոհամէտ Օսման Էլ Խշթի, Գահիրէ Համալսարանի փոխ նախագահ դոկտ. Մոհամէտ Սամիի, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի տնօրէնուհի դոկտ. Խլուտ Եագուպի եւ Գրականութեան Կաճառի տնօրէնուհի դոկտ. Նակլա Րա'ֆաթ Սալէմի:

Յայտագիրը բաղկացած էր երկու մասերէ. առաջին բաժնին մէջ բացման խօս-

քով հանդէս եկեր է դոկտ. Նակլա Րա'ֆաթ, ապա խօսք առեր է ՀՀ Եգիպտոսի լիազօր եւ արտակարգ դեսպան Հրաչեայ Փոլատեան, որմէ ետք ելոյթ ունեցեր է Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի տնօրէնուհին. առաջին բաժինը ավարտը գտեր է նոյն Կեդրոնին աշակերտներուն արտի խօսքով:

Երկրորդ բաժնով իրենց ուսումնասիրութիւնները ներկայացուցեր են նախ դոկտ. Մոհամէտ Սալէի, խօսելով Հայաստանի կեցուածքին մասին Պաղեստինեան հարցին առնչութեամբ:

Ապա դոկտ. Ճորճ Սիմոնեան, ատենապետը ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղին եւ Գանատական-ԱլԱիրամ համալսարանի Արուեստի Կաճառի տնօրէնը, ներկայացուցեր է ՀԲԸՄիութեան մշակութային դերը, իսկ վերջին խօսք առնողը եղեր է դոկտ. Մոհամէտ Րիֆ'աթ Էլ Իմամ, Տամանհուրի Համալսարանի Գրականութեան Կաճառի նախկին տնօրէնը, ներկայացուցեր է «Հայերուն մշակութային դերը ժամանակակից Եգիպտոսի մէջ» նիւթը:



## ԲԱՑՈՒՄ Վ. ՃԻԶՄԷՃԵԱՆ ԱՐԽԻՒԱՍՐԱՀԻ

Իր ցաւալի մահուան երկրորդ տարե-  
լիցին առիթով, ՀԲԸՄԻութեան Գահիրէի  
մասնաճիւղը պաշտօնապէս բացումը  
կատարեց կեդրոնին մէջ գտնուող արխի-  
ւասրահին:

Կիրակի, 28 Յուլիս 2024-ի առաւօտ-  
եան, յաւարտ սուրբ պատարագի հոգե-  
հանգստեան պաշտօնէն ետք, իրիկուան  
ժամը 6-ին պաշտօնական բացումը կա-  
տարուեցաւ ՀԲԸՄԻ Գահիրէի մասնա-  
ճիւղին վաղամեռիկ ատենապետ տորթ.  
Վիգէն Ճիզմէճեանի անունը կրող արխի-  
ւասրահին, ՀԲԸՄԻ 26 Մուրատ Պէկ հաս-  
ցէին վրայ գտնուող կեդրոնին երկրորդ  
յարկէն ներս:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀԲԸ-  
ՄԻութեան Գահիրէի մասնաճիւղի ատե-  
նապետ դոկտ. Ճորճ Սիմոնեան, որմէ  
ետք արխիւասրահի պատասխանատու  
դոկտ. Մարուշ Երամեան հակիրճ տեղե-  
կութիւններ տուաւ արխիւասրահի կազ-  
մաւորումին եւ հոն պահ դրուած արխիւի  
նիւթերուն մասին:

Իր սրտի խօսքը փոխանցեց ՀԲԸՄԻ  
Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժո-  
ղովի պատուոյ ատենապետ տիար Պերճ  
Թէրզեան, վեր առնելով տորթ. Վիգէն  
Ճիզմէճեանի անսակարկ նուիրումը եւ  
լուռ աշխատանքը Միութեան յարկէն  
ներս:

Շնորհակալական իրենց սրտի խօսքը

փոխանցեցին վաղամեռիկ ատենապե-  
տին տիկինը՝ Ալին Պըլլըքտանեան-Ճիզ-  
մէճեանն ու անոր դուստրը՝ Ասիէ Ճիզմէճ-  
եան-Կապէեանը:

Փոքրիկ հիւրասիրութեան մը շուրջ  
ներկաները մտերմօրէն զրուցեցին եւ  
իրենց յուշերը բաժնեկցեցան: Տորթ. Վի-  
գէն Ճիզմէճեան, իր միութենական աշ-  
խատանքով տիպար օրինակ մըն է իրեն  
յաջորդող երիտասարդներուն համար: Իր  
յիշատակը միշտ վառ կը մնայ եգիպտա-  
հայոց սրտերուն մէջ:

Մեծ շնորհակալութիւն ՀԲԸՄԻ Գահի-  
րէի մասնաճիւղին ատենապետ դոկտ.  
Ճորճ Սիմոնեանին, որուն ծրագիրն էր  
ՀԲԸՄԻ կեդրոնին սրահները անուանա-  
կոչել կեանքէն շատ կանուխ հեռացած  
երկու ատենապետներու՝ Շրջանակային  
Յանձնաժողովի ատենապետ՝ Օսնիկ Պը-  
լլըքտանեանի (սրահին բացումը պիտի  
կատարուի աշնան) եւ Գահիրէի մասնա-  
ճիւղի ատենապետ Վիգէն Ճիզմէճեանի  
յիշատակին, ինչպէս նաեւ գլխաւոր ժո-  
ղովարահը կոչել անունովը ՀԲԸՄԻ եր-  
կար տարիներու անձնուէր եւ անսակարկ  
նուիրումով փարած, գաղութի երէց ան-  
դամներէն տիար Պերճ Թէրզեանին, որ  
կը շարունակէ իր թանկագին խորհուրդ-  
ներով օգտակար հանդիսանալ մեր մեծ  
Միութեան:





## ՄՕ. ՄԻՀՐԱՆ ՂԱԶԷԼԵԱՆԻ հետ

ՄՕ. Միհրան Ղազելեան ծնած է Պէյրուս, 1962-ին: Երաժշտական բարձրագույն ուսումը ստացած է Երեւանի Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցէն ներս, զոր գերազանցութեամբ ավարտած է իբրեւ խմբավար 1991-ին, իսկ իբրեւ երաժշտագէտ՝ 1993-ին: 1994-ին որպէս խմբավար ստացած է ասպիրանդուրայի՝ կատարողական արուեստի բարձրագույն վկայականը՝ գերազանցութեամբ:



Ղեկավարած է բազմաթիւ երգչախումբեր Էջմիածնի, Երեւանի, Օջականի եւ Թեհրանի մէջ:

Պաշտօնավարած է Էջմիածնի Գէորգեան հոգեւոր Ճեմարանին մէջ:

Ղեկավարն է Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին, ՀԲԸՄիութեան մանկական «Ծիածան» երգչախումբին, Գահիրէի Գալուստեան-Նուպարեան վարժարանի «Արցախ» երգչախումբին:

Իր ղեկավարած երգչախումբերուն կատարողութեամբ տիրացած է տարբեր մրցանակներու:

**Տեղեկատու - Վերջերս գաղութը տօնախմբեց «Արաքս» երգչախումբին 20-ամեակը (տարի մը ուշացումով, որովհետեւ երգչախումբը հիմնուած է 2003 թուականին), գեղեցիկ համերգով մը, որ ձեւով մը նաեւ Ձեր Գահիրէ կեցութեան 20-ամեակը կը նշէր: Ինչպէս կը գնահատէք անցնող այս երկու տասնամեակները նախ որպէս կեցութիւն, ապա որպէս աշխատանք:**

**ՄՕ. Մ. Ղազելեան** - Արուեստագէտի մը համար իւրաքանչիւր հանրային ելոյթ առաջին հերթին գեղարուեստական իր «խօսքը» տեղ հասցնելու հարթակ մըն է, պատուաբեր եւ պատասխանատու, բայց նաեւ երկսայրի ու վտանգաւոր, քանի որ այդ հանրային ելոյթը միաժամանակ իւրայատուկ քննութիւն մըն է, որուն արդիւնքէն կախուած իրեն կը տրամադրուի յաջորդ հարթակ մը ունենալու հնարաւորութիւնը, կամ՝ ոչ: Տրամադրութեան տակ ունենալ գեղարուեստական խօսքի այդ հարթակը, զոր եզրփոխակազմը համայնքը արժանացուցած է զիստ ահա արդէն երկու տասնամեակ, վստահութեան այն ծանրակշիռ գրաւականն է, որով արդարացուած կը համարեմ թէ կեցութիւնս եւ թէ գործունէութիւնս մեր համայնքէն ներս:

Անկեղծօրէն պէտք է խոստովանիմ, որ

ծրագրերուս մէջ բնաւ չէ եղած Հայաստանէն քանի մը տարիէն աւելի երկար բացակայելու մտադրութիւն, ո՞ր մնաց թէ տաս տարի (քսանի մասին մտածելն անգամ աներեւակայելի էր): Մինչդեռ հիմա ես ինքզինքս կը զգամ եզրփոխակազմ համայնքին մէկ մասնիկը:

Իսկ ամէն ինչ սկսաւ այն հեռախօսազանգէն, որ ես ստացայ այն ժամանակուան Գահիրէի Քաղաքական ժողովի ատենապետ Տիար Պերճ Թէրզեանէն՝ Թեհրանի համայնքէն ներս իմ երկու տարուան աշխատանքային պայմանագրիս ավարտին: Ստացած զանգս նոր աշխատանքային հրաւեր մըն էր, այս անգամ Գահիրէի հայ համայնքէն ներս, իսկ տեղութեան մասին ենթադրութիւնս՝ առաւելագոյնը եւս մէկ-երկու տարուան աշխատանքային հեռանկարը: Այդ մտադրութեամբ ընտանիքիս հետ ժամանեցի Եզրփոխակազմ: Բայց Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ Առաջնորդ Սրբազաններ՝ (առաջին 4 ամիսը) երջանկայիշատակ Գերշ. Տ. Զաւէն Արք. Չինչինեանին եւ ապա Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանին հոգատար վերաբերմունքը, համայնքին գրկաբաց ու հարազատ կեցուածքը եւ անշուշտ ինծի սպասող մասնագիտական աշխատանքային պատասխանատու եւ ընդարձակ դաշտը եղան այն գործօնները, որով տա-



րին դարձաւ երկու, ապա հինգ, տաս եւ... Ինչպէս անցան այս երկու տասնամեակները:

Ահա, ինծի վստահուած այս մասնագիտական գործունէութեան դաշտէն խիստ արժէքաւոր մէկ մասն է «Արաքս» երգչախումբը, որուն կազմաւորման գործին լծուած էի՝ հենելով իր թիկունքին երգչախմբային ակադեմիաներու շուրջ դար մը ունեցող համայնքին երաժշտասէրներուն օժանդակութեանը:

«Արաքս» երգչախումբը իր տեսակով սիրողական է, իսկ սիրողական երգչախումբերը շատ կարելի առաւելութիւն մը ունին արհեստավարժ խումբերու նկատմամբ, քանի որ խումբին իրենց մասնակցութիւնը աշխատանքի պարտադրանքով չէ պայմանաւորուած, այլ սիրողաբար՝ աշխատանքէն դուրս յատուկ տրամադրուած ժամանակով: Ի դէպ, աշխատանքէ դուրս մարդու ապրած կեանքը նոյնքան եւ թերեւս ակելի կը բնորոշէ մարդուն, քան բուն աշխատանքը, քանի որ անոր որոշումն է իր ազատ կամ հանգիստի ժամանակը վերածելու ժամանցի, կամ այդ ազատ ժամանակը վերածելու (եթէ թոյլ տրուի ինծի այս բառը շրջանառութեան մէջ դնել) **ժամորսի**: Ի տարբերութիւն ժամանցի ժամորսը աշխատանքէ դուրս եղած ժամանակը որսալով որեւէ բնագաւառի մէջ լաւագոյնս արդիւնաւորելու իմաստը կ'արտայայտէ: Ժամորսով կը զբաղուին իրենց տրուած ազատ ժամանակը գնահատող մարդիկ:

Երաժշտութեան վերաբերեալ գոյութիւն ունի ամենատարբեր վերաբերմունք. ոմանց համար պարզապէս քով-քովի շարուած ձայներ են՝ նախատեսուած լոկ ժամանցի համար: Մինչդեռ որակեալ երաժշտութիւնը ձայներու քառուէն հատիկ առ հատիկ պեղելով միակն ու անկրկնելին, կը ստեղծէ նորին մեծութիւն ներդաշնակութիւնը եւ իր միաձայն սլացքի եւ բազմաձայն վեհութեան մէջ տիեզերք կը բանայ մեր առջեւ: Ահա այս տիեզերական ներդաշնակութեանը հաղորդելու ներքին պահանջն է, որ խումբ մը մարդոց կը համախմբէ կազմելու երգեցիկ այն մտերմութիւնը, շնչառութեան այն միասնականութիւնն ու զգացումներու այն միահիւսումը, որ մէկ բառով կը կոչենք երգչախումբ:

Երգչախումբի մը հնչեցուցած «խօսքի» պատասխանատուութիւնը թէեւ խմբավա-

րինն է, բայց կատարման ձեւով այդ խօսքը հաւաքական է, այսինքն այդ խօսքի մարմնաւորումը ունի «համահեղինակ»՝ յանձին երգչախումբին: Իսկ մտայղացումները, նախատեսումները, երգացանկային «քաղաքականութիւնը» եւ երգչախումբին հետ գործնականօրէն աշխատելու սկզբունքները, որ կը կիրառուին խմբավարի մը կողմէ, ժամանակի փորձութիւնները յաղթահարած գեղարուեստական խումբերը կ'օժտեն յատուկ յատկանիշով մը, որ կարելի է կոչել խումբի մը ճանաչելի ձեռագիրը, այլ խօսքով՝ խումբի մը դիմագիծը: Մեր երգչախումբը հակառակ իր սիրողական բնոյթին, հակառակ իր յարափոփոխ կազմին, հետեւաբար եւ իր ելեւէջող կարողութիւններուն, երկու տասնամեակի վրայ երկարող իր գործունէութեամբ առ այսօր կը ներկայանայ կատարողական կայուն մակարդակով մը: Եւ ես հպարտ եմ «Արաքս» երգչախումբի ներկայի եւ անցեալի իւրաքանչիւր անդամով, որ ամէն անգամ (ըլլայ հանդիսատեսէն ծածուկ, երկարող փորձերու շրջան, թէ՛ ամփոփիչ պատասխանատու ելոյթ) իր հոգիէն մասունք առ մասունք հաւաքելով կերտած է եւ կը կերտէ այդ դիմագիծը:

Այսպէս ես կը բնութագրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը, որուն 20-ամեակի յոբելենական համերգը տեղի ունեցաւ նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանին սոյն թուականի Մայիս 24-ին: Ինչ կը վերաբերի «տարի մը» ուշացումին՝ ապա տամ պզտիկ լուսաբանում մը:

Երգչախումբը իր առաջին փորձը ունեցած է 2003 թուականի Նոյեմբեր 17-ին եւ ճիշդ մէկ ամիս անց՝ Դեկտեմբեր 17-ին ունեցած է իր առաջին ելոյթը՝ նուիրուած Էջմիածնի Մայր Տաճարի հիմնադրութեան 1700-ամեակին: «Արաքս»-ի 20-ամեակի յոբելենական համերգի մեր նախատեսումը կը վերաբերուէր 2023-ի տարեվերջի ճիշդ այդ շրջանին, ակելի ստոյգ՝ ճիշդ այդ Դեկտեմբերի 17-ին: Սակայն, ինչպէս գիտէք, նախաամանորեան շրջանը միջոցառումներով ամենաառատ ժամանակաշրջանն է ինչպէս ամէն տեղ, այնպէս ալ մեր համայնքին համար: Հետեւաբար պետք էր, որ խուսափէինք անհարկի խաչաձեւումներէ, առաւել եւս, յաճախ նոյն անձերն էին ընդգրկուած թէ՛ երգչախումբ-



բի եւ թէ՛ ընթացիկ այլազան միջոցառումներուն մէջ: Իսկ քանի մը օր անց, այսինքն 2024 թուականը թելակոխելէ ետք արդէն էական չէր թէ նոր տարուան որ շրջանին տեղի կ'ունենար մեր համերգը, մէկ ամիս ուշացումով, թէ՛ վեց: Այս պարագային մեզի համար ժամանակային հարցը ձեւական, հետեւաբար յարաբերական արժէք էր, մինչդեռ լիարժէք համախմբումով մը գեղարուեստական պատշաճ որակ ապահովելը՝ բացարձակ:

**S. Անցնող տարիներուն համերգները գրեթէ բոլորը նուիրուած են երգերաժշտութեան երկնականարին վրայ փայլող երգահան երաժիշտներու: Ինչպէս կ'ընտրէք այդ անունները, միայն որպէս յոբելէմ, թէ այլ նկատառումներով նաեւ:**

**Մ. Ղ.** Մեր առօրեայ կեանքը անխուսափելիօրէն լեցուցած տարատեսակ երաժշտական եւ ոչ երաժշտական խայտաբղէտ մշակութային հոսքին մէջ այդ փայլող երգահան-երաժիշտներուն արուեստին մերձեցումն անգամ, ըստ իս, ինքնին «ինքնամաքումի» ամոքիչ անդրադարձ ունի բոլորիս վրայ: Մեր շրջապատի ձայնային ազդակներուն առջեւ (խօսք, աղմուկ կամ երաժշտութիւն) մեր ընկալիչները՝ ականջները միշտ բաց են: Մեր ամենօրեայ կեանքը լեցուն է ձայնային այդ անկառավարելի հոսքի գիտակցուած եւ աւելի յաճախ չգիտակցուած ընկալումով: Այդ հոսքը չի հարցներ՝ կ'ուզես, կամ՝ ոչ, կը մտնէ մեր մէջ եւ կը փոխէ մեզ: Այդ ազդեցութիւնները անդառնալի կրնան ըլլալ յատկապէս մանկական տարիքի անձանց համար, որոնց գեղարուեստական չափանիշները տակաւին ձեւաւորուած չեն: Ինչպէս ժամանակի ընթացքին յարատեւ աղմուկը անզգալիօրէն կը մաշեցնէ մեր ջղային համակարգը, այնպէս ալ անորակ երաժշտութիւնը կը քայքայէ մեր ճաշակը, իսկ օտար երաժշտութիւնը կ'աղճատէ մեր ծինային (genetic) երաժշտական յիշողութիւնը: Հետեւաբար, վանելով ամէն մէկ անճաշակութիւն եւ միաժամանակ բաց ըլլալով «օտար» դասական կամ ճաշակաւոր ժամանակակից երաժշտութեան առջեւ, մեր գերխնդիրն է

ապաւինիլ ազգային տոհմիկ երաժշտութեան եւ այդ երաժշտութիւնը ստեղծող լաւագոյն ներկայացուցիչներուն:

Այնպէս որ, երգ-երաժշտութեան երկնականարին վրայ փայլող հայ երգահան երաժիշտները մեր իրաւ առաջնահերթութիւններն են, իսկ տարիներու հոլովոյթով առաջացող անոնց յոբելէական ամենակները մեզի համար ինքնին հրաշալի առիթներ են ամբողջովին սուզուելու անոնց արուեստին մէջ եւ նաեւ մեզի հետ տանելու մեր հանդիսատեսը: Իրաւ է, որ այդ երգահաններէն ոմանք ստեղծագործած են նաեւ օտար լեզուով եւ կամ ուրիշներ, որոնք առաւելաբար մեներգերու հեղինակներ են: Բայց, համապատասխան որոշ աշխատանք մը իրականացնելէ ետք, «Արաքս» դարձած է անոնց մենակատարային երգերէն շատերուն առաջին անգամ որպէս խմբերգ հնչեցնողը եւ օտարալեզու բնագիրներով երգերուն (ռուսերէն, ֆրանսերէն) առաջին անգամ հայերէն հնչեցնողը: Նախապատուութիւնը տալով հայ ազգային, աշուղական, ժողովրդական, դասական երաժշտութեանը սակայն, մենք մեզ չենք ցանկապատած ազգային որեւէ տեսակի սահմանափակումով: Մեր երգչախումբի համերգային երգացանկը պարբերաբար ընդգրկած է նաեւ ոչ հայ երաժիշտներու ստեղծագործութիւններ. ինչպէս՝ մերձաւոր-արեւելեան, հարաւ-ամերիկեան, եւրոպական դասական եւ ժամանակակից խմբերգներ՝ աւելի քան տասնեակ մը օտար լեզուներով: Այդ իմաստով բարացուցական է հէնց 20-ամեակի համերգը, ուր ընդգրկուած էին 18 երգեր, որոնցմէ ճիշդ կէսը՝ հայերէն, իսկ մնացեալը՝ 8 տարբեր լեզուներով: Այս ամբողջ բազմազանութեան մէջ սակայն, անսակարկելին եղած է եւ կը մնայ գեղարուեստական ճաշակի չափանիշը:

**S. Նկատի առնելով որ «Արաքս» երգչախումբին անդամները սիրող երգիչներ են, ինչ են այն դժուարութիւնները, զորս կը դիմագրաւէք որպէս խմբավար:**

**Մ. Ղ.** Երգչախումբերուն հետ աշխատանքը իսկապէս տարբեր է եւ ունի իր բնու-



որչ առանձնայատկությունները կապուած անոնց կազմին ու տեսակին (մանկական կամ երկսեռ, արհեստավարժ կամ սիրողական եւայլն): Նոյնիսկ սիրողական երգչախումբերը, կապուած իւրաքանչիւր անդամի երաժշտական կարողութիւններուն հետ, իրարմէ կրնան չափազանց տարբեր ըլլալ: Այս բոլոր առանձնայատկութիւնները հաշուի առնելով, համապատասխան աշխատելաոճով եւ համապատասխան երգացանկով լուծումներ ապահովելը արհեստավարժ խմբավարի մը պարտականութիւններն են: Բայց ասոնցմէ աւելի կարելորդ, ըստ իս, գեղարուեստական հաւաքական աշխատանքին հաւատացող, իրենց կարողութիւնները յղելու ձգտող եւ արուեստներէն ամենախորհրդաւոր եւ ամենատիեզերական տեսակով՝ երաժշտութեամբ միասնաբար արարելու պատրաստ արուեստասէրներու համախմբումն է, որոնց ջանքերուն վերջնարդիւնքը կը դրուի հանդիսատեսին ի ցոյց եւ որ կը կոչուի համերգ:

Ինչ կը վերաբերի դժուարութիւններուն, եթէ անոնք անյաղթահարելի են ապա արգելապատնէշներ են եւ ոչ թէ դժուարութիւններ, իսկ եթէ յաղթահարելի են ապա այն գինն են, որոնցմով կ'արժեւորուի թէ յաղթահարողը եւ թէ՛ ձեռք բերուած արդիւնքը՝ վաստակը: Հետաւորեալմբ ձեռք բերուածը, որուն ետին նուիրում, ջանք ու ճիգ չկայ, սոսկ տեղքայլ է, նոյնիսկ յետընթաց, եւ մրցակցային այս աշխարհի մէջ ճամբայ ելածին համար չապահովեր ամենակարելորդ՝ յարատեւ կատարելագործում:

**Տ. «Արաքս» երգչախումբին մաս կազմելու համար պայման է նօթա կարդալիմանալը, թէ՛ գեղեցիկ ձայն եւ «մաքուրականջ» ունենալը բաւարար են: Նոր, ամբողջովին անծանօթ երգ մը ինչպէս կը սորվին, մանաւանդ ալթօ-թենորպաս բաժինները:**

**Մ. Ղ.** Հայրենիքէն դուրս գործող գեղարուեստական խումբերուն համար անշրջանցելի է ազգային ոգիի, մայրենի լեզուի եւ ընդհանրապէս ինքնութենական հարցի առաջնահերթութիւնը թէ՛ զգացական եւ թէ՛ գործնական գետնի վրայ թէ՛ժ պահելը: Սփիւռքի սիրողական երգչախումբերը զուտ երաժշտական խնդիրներու կողքին ունին նախ եւ առաջ ազգային

տոհմիկ երգարուեստի եւ հայերէն գրական խօսքի միջավայր մը ապահովելու գերխնդիրը: Եւ այստեղ է այդ երկուքին համատեղումի այն շատ նուրբ սահմանագիծը, որուն վրայ պէտք է ապահովուի թէ՛ երաժշտական եւ թէ՛ ազգային նպատակներու ոսկէ հաւասարակշռութիւնը կամ ոսկէ յարաբերակցութիւնը, այսպէս կոչուած golden ratio-ն: Այս լոյսի տակ համեմատաբար փոքրաթիւ մեր համայնքին համար երգչախումբի թեկնածու երգիչին նօթա կարդալ գիտնալը չափանիշ դարձնելը անշուշտ անասելի ճոխութիւն պիտի ըլլար մեզի համար: Նոյնիսկ գեղեցիկ ձայնն ու երաժշտական մաքուր լսողութիւն ունենալը յաճախ դարձուցած ենք ոչ թէ սկզբնական պահանջ, այլ մեր միասնական աշխատանքով նուաճուելիք նպատակ: Ատիկա անշուշտ որոշակիօրէն կը դանդաղեցնէ ընդհանուր աշխատանքներու ընթացքը, հետեւաբար եւ արտադրողականութիւնը: Բայց տեղաւորուելով ժամանակային տրամաբանական սահմաններու մէջ մեր նպատակն է ապահովել որակ, եւ ոչ՝ քանակ:

Ինչպէս ընթերցողը արժանի է բովանդակալից գրութեան, այնպէս ալ հանդիսատեսը միշտ եւ ամէն տեղ արժանի է որակեալ ելոյթ ունկնդրելու: Եւ իրեն համար կարելոր չէ, թէ այդ արդիւնքը ստանալու ճամբան ինչքան երկար կամ ինչքան խորդուբորդ եղած է: Հետեւաբար երգչախումբի անդամի մը ընտրութեան հետ կապուած երաժշտական սկզբնական կարողութիւններու նշածողի այդպիսի բարձրութիւնը (գեղեցիկ ձայն եւ լաւ երաժշտական լսողութիւն) կը ձգենք արհեստավարժ խումբերուն՝ մեզի պահելով կատարելութեան ուղին յամառ աշխատանքով ապահովելու ճամբան: Կը կարծեմ նոյնն է պարագան սփիւռքի փոքր համայնք ունեցող երգչախումբերու մեծամասնութեան համար:

Ընդհանրապէս ձայնաբաժիններու հետ աշխատանքը (սփրանօ, ալթօ, թենոր, պաս) նոյնպէս կապուած է երգչախմբային երգիչի երաժշտա-լսողական ուշիմութեան հետ: Աւելի ապահովը, մեր պարագային, երկար ճամբան է, այսինքն իւրաքանչիւր ձայնաբաժնի հետ առանձին աշխատիլ, տարբեր ժամանակներու կամ օրերու, որպէսզի նիւթի իւրացման ընթացքին իրար չլսեն, եւ ապա որոշ հմտութիւն մը ձեռք բերելէ յետո՛ւ:



տոյ միայն միացնել զանոնք՝ աստիճանաբար գումարելով ճայնաբաժինները իրար (ճիշդ այնպէս ինչպէս սկսնակ դաշնակահարները կը սերտեն իրենց նիւթը՝ նախ առանձին ձեռքերով եւ ապա՝ երկուքը միասին): Այստեղ կ'ուզեմ նկատել, որ ինչպէս երաժշտական կատարողականութիւնը որոշ ուսուցման շրջան մը կ'ենթադրէ, (թէւ կատարելութեան ճամբան բռնողին համար ուսումը վերջ չունի), այնպէս ալ՝ ունկնդրութիւնը զարգացման շրջան մը կ'ենթադրէ եւ անոր ընթացքը նոյնպէս անսահման է: Համոզուած եմ, որ ճիշդ կազմակերպուած համերգի մը ունեցած հասանելի մէկ-մէկուկէս ժամը պէտք է անուղղակի կերպով պարունակէ նաեւ այդ ուսուցողական տարրը:

**Տ. Արդեօք դասընթացք մը եղած է երգողներուն նօթա կարդալու իմացութիւն ջամբելու համար:**

**Մ. Ղ.** Ինչպէս գիտեք Արաքս երգչախումբը իր ոչ մեծ թուաքանակին մէջ տարիքային կազմով ոչ պզտիկ այլազանութիւն մը կը պարզէ՝ պատանեկան տարիքէն մինչեւ իրենց կեանքի եօթերորդ տասնամեակը բոլորած երգիչ-երգչուհիներ: Հետեւաբար իրենց հետ այդ աշխատանքը համատեղելի սկզբունքներու կարելիութիւն չ'ապահովեր: Բացի այդ, դասընթացք մը երգիչէն կը պահանջէ յաւելելալ ժամանակի տրամադրում, որ մեր օրերու կեանքի հեւքոտ վազքը ոչ միշտ է, որ կ'արտօնէ: Ատոր փոխարէն մեզ մօտ որեւէ երգի ուսուցում կը կատարուի բացառապէս նօթաներով, որը անուղղակի ճամբայ մըն է նօթա կարդալու հմտութիւն ձեռք բերելու եւ զարգացնելու համար: Աւելի երիտասարդ տարիքի անդամները իրենց դպրոցական տարիներէն մնացած նօթագիտութիւնը արդէն այս եղանակով որոշ չափով կը վերյիշեն ու կը կիրառեն: Իսկ ավելի տարեցներուն հետ այդ ուղղութեամբ յատուկ փորձեր կ'ըլլան՝ ըստ կարելիութեան:

**Տ. «Արաքս» երգչախումբը Հայաստանի մէջ տիրացեր է կարելոր մրցանակի: Կրնա՞ք խօսիլ անոնց մասին, օրինակ՝ այդ մրցումներուն մասնակցութեան երգացանկը որոշուած կ'ըլլայ, թէ ազատ էք երգերուն ընտրութեան մէջ:**

**Մ. Ղ.** Համացանցային եւ ժամանա-

կակից թեքնոլոճիք (հմտասարքային) կարելիութիւնները վերջին երկու տասնամեակին մեր կեանքը փոխած են աներեւակայելի չափերով: Աւանդական կենդանի իրականութիւնները այսօր փոխարինուած են հեռահաղորդակցական նոր կարելիութիւններով: Այսօր սովորական են արդէն առցանց աշխատանքները, ժողովները, քարոզները, ուսումը, առետուրը եւայլն: Բնականաբար անմասն չէ մնացած ատկէ նաեւ կենդանի կատարողութենէն դուրս երբեւէ չպատկերացուած երաժշտութեան բնագաւառը: 2016 թուականին «Արաքս» երգչախումբը մասնակցեցաւ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած համահայկական մրցանակաբաշխութեան, որը նոյնպէս կազմակերպուած էր առցանց: Այսինքն մասնակից խումբերը պէտք է փաստագրուած կերպով ներկայացնէին իրենց գործունեութեան պատմութիւնը, երգչախումբի կազմն ու քանակը, համերգային երգացանկը, իրենց համերգային կատարումներուն youtube-եան փաստագրումներու պահանջուած յստակ քանակ մը եւայլն: Հայաստանեան եւ սփիւռքեան մասնակից գեղարուեստական խումբերու միջեւ ընթացող մրցոյթի այդ նիւթերն էին, որ «Հայապահպանութեան Գործում Նշանակալի Աւանդի Համար» Համահայկական մրցանակաբաշխութեան ծիրէն ներս ամիսներ շարունակ համապատասխան յանձնախումբի կողմէ ստուգուելէ եւ գնահատուելէ ետք «Արաքս» երգչախումբը արժանացուցին «Լաւագոյն Գեղարուեստական Խումբ» անուանակարգի առաջին մրցանակին:

Հպարտ եմ «Արաքս» երգչախումբի 20-ամեայ անցած ուղիով, հպարտ եմ մեր համայնքով, երախտապարտութեամբ կ'արժեւորեմ երաժշտութեան բնագաւառէն ներս ինծի ընձեռուած 20-ամեայ այս կարելիութիւնները եւ կը մնամ առաւելագոյն կերպով ինքնաիրացուած ըլլալու ձգտումներուս հաւատարիմ:

**Տ. Շնորհակալութիւն:**



## ՈՐԲՈՒՀԻՆԵՐ

*Որբը՝ մոլոր գառ, աշխարհքը՝ մսուր  
Ո՞վ նայի վրան կամ ո՞վ տայ նրան  
Մի պարտառ ժպիտ, շոյանք մի փշուր:*

Պ. Սևակ

Երբ ձեռքս առի «Որբուհիներուն տուները Գահիրէ եւ Աղեքսանդրիա» գիրքը, «որբուհի» բառը ինձ տարաւ անցած դարու սկիզբները, 1900-ական թուականներ: Այո՛, Մեծ Եղեռնը, սակայն որբերու ծագման, կամ առաջացման մասին չէ որ կ'ուզեմ խօսիլ:

Երբ 90-ականներու վերջին յայտնուեցայ Աղեքսանդրիա, հասկցայ, որ շուրջս Մեծ Եղեռնը վերապրած մարդիկ կան: Զրուցեցի հետերնին եւ մեծ եղան զարմանքս ու տխրութիւնս, որ այս մարդոցմէ շատերուն պատմութիւնները նոյնիսկ իրենց զաւակները չեն լսած: Եւ մեծ բարդութիւններով սկսայ զրուցել արդէն 90 տարին բոլորած մարդոց հետ: Ամէն մէկը յիշողութեան հսկայ լեռ մը, որ խնամքով կը պահպանէ իր կեանքի՝ մէկու մը տխուր, մէկու մը՝ ամօթալի, մէկու մը՝ անախորժ, նեղացուցիչ յուշ մը, որ անհաճոյ է ամէնուն: Իւրաքանչիւրը առանձին մօտեցում կ'ուզէր: Տարիքը ապրած, փորձառու, իմաստնացած, սակայն ամէնուն աչքերուն մէջ տխրութեան ու մեծ վիշտի կնիք մը ներկայ է, որ անկարելի է շփոթել կամ մոռնալ: Դաժան բան է փորփրել մարդու յիշողութիւնը: Դաժան է, որովհետեւ այս մարդիկ տակաւին մանուկ, ջարդ տեսած են ու կոտորած, 5, 6, 8 տարեկան պզտիկներ հասկցան, եւ ոչ միայն հասկցան, ապրեցան, իրենց մանկական աչքերով տեսան, կրեցին մահ, սպանդ, նախճիր... Այս խօսքերը մտաբերել ու արտասանելը արդէն դիւրին չէ, իսկ անոնք տեսած են, զգացած, ապրած:

Գանք «Որբուհիներուն տուները Գահիրէ եւ Աղեքսանդրիա» գիրքին: Իմ աննման հերոսներէն մին ալ այս որբուհիներէն էր՝ Աղեքսանդրիոյ Հայ

Որբուհիներու Մելգոնեան կայանէն: Իմ շատ սիրելի Աղանին՝ Աղանի Փամպուբեան: «Փողոցը մինակ՝ կու լայի: Անօթի, ծարաւ, չէի գիտեր ո՞ր եմ... Կին մը ձեռքէս բռնեց ու տարաւ տեղ մը: Հոն շատ պզտիկներ կային: Այդտեղ էր, որ սորվեցայ որբ ու որբանոց բառերը» կը պատմէր Աղանին: Աշխարհի մէջ միշտ որբեր եղած են, կան, սակայն որբանալ ազգովին...

Այս գիրքը մեր ազգային առանձնա-յատկութիւններէն եւս մէկն է: Կ'ողջունեմ գրքի տպագրութիւնը եւ ուրախ եմ, որ իրենք՝ այդ որբուկները չեն ապրիր այլեւս: Քանզի մանուկ տարիքին, մէկ օրուան ընթացքին մեծցած, տառապած, հասունցած մարդը, իր ծեր տարիքին ալ մանուկ է ու անօգնական: Իմ հերոսներէն իւրաքանչիւրը սուզուելով յուշերու գիրկը, կը մանկանար՝ անկեղծութեամբ, անկաշկանդ մտքերով, խօսքերով, լացով ու ծիծաղով...

Գիրքը հրաշալի է, փաստերու գեղեցիկ հավաքածոյ մը, ուր ի ցոյց դրուած են մեր ազգին բարեացակամ յատկանիշները, ցաւը լռութեամբ եւ արժանապատիւ կերպով տանելու կամքը... Բայց եւս մէկ անգամ փորփրել մեր սիրելիներուն յիշողութիւնը... Քանզի ամէնն ալ կարդալ կը սիրէին եւ պիտի՛ կարդային սա գիրքը: Պիտի կարդային եւ մէկ անգամ եւս վերապրէին իրենց որբ վիճակը: Ես կ'երեւակայեմ, թէ ինչ զգացումներ, ինչ յիշողութիւններ պիտի այցելէին իմ խեղճ հերոսներուն եւ ո՞չ միայն անոնց: Գիրքին դէմ ոչինչ ունիմ, ընդհակառակը: Անձամբ ես շատ ուրախ եմ, որ այն ժամանակ շատ անպատասխան մնացած հարցերու պատասխաններ գտայ այնտեղ, շատ մութ անկիւններ լուսաւորուեցան: Այս պարզ նամակագրութիւն չէ, պարզ փաստաթուղթերու կամ վաւե-





րագրերու ժողովածոյ մը չէ: Ինծի համար՝ մեր բազմաչարչար պատմութեան տխուր էջերէն մին է, որ նրբանկատութեամբ խմբել է հեղինակը՝ տիկ. Մարուշ Երամեանը: Մանրակրկիտ, ոչ դիրին այս աշխատանքը նաեւ հոգեկան մեծ տուայտանքներ պահանջած է: Ինչ ըսել է «...Արդարեւ ո՞վ կրնար սպասել, որ ծնողազուրկ, աննպաստ պայմաններու տակ խլեակ մը կրնար ունենալ այնքան գեղեցիկ մտածումներ եւ զանոնք դասաւորելու եւ արտայայտելու հազուադէպ կարողութիւնը» (մէջբերումը « Որբուհիներուն Տուները Գահիրէ եւ Աղեքսանդրիա» գիրքէն է):

Աղանին պիտի ըսէր՝ «Որբը չէր բաւեր, հիմա ալ խլեակ, ալ էրբ պիտի ազատինք ասկէ...»: Անգամ մը մեծ յանցանքի մէջ գտայ ինքզինքս, երբ անզգուշութիւնը ունեցայ Աղանիի քով արտասանել այդ չարաբաստիկ «որբ» բառը.

«Ինչ է, ճակտիս գիրն է, չազատեցանք... աս տարիքիս ալ չազատեցայ...»:

Գիրքը կարդալէն ետք հասկցայ, թէ որքան ցաւ ու անարգանք տեսած են այս խեղճ աղջիկները: Ո՞վ գիտէ, յարգելի՛ տիկին, թէ ինչպիսի ծնողներէ սերած է այդ աղջիկը, որ որբի պիտակ կը կրէ ակամայ: Գուցէ շնորհալի, կամ տաղանդաւոր հայր մը, կամ մայր ունեցած է ... Չէ՞ որ անոնցմէ շատեր չեն յիշեր անգամ իրենց մայրը: Իմ հերոսներէս Հայկազ Տիլէնեան ըսած է.

«Ես պզտիկ էի, շատ բան չեմ յիշեր: Հայրս երազի պէս կը յիշեմ: Հաւանաբար մայրս ըլլալու էր, որ ինծի գրկած՝ զացիք...»:

Հասկցայ նաեւ, որ այս եւ նման կարգի վիրաւորանքներն են, որ դառնութեան գորշ կնիք դրած են որբերու դէմքերուն վրայ, աչքերուն եւ հոգիներու մէջ: Տխուր աչքերը եւ դառնութենէ ծանրացած հոգիները այդ կը վկայէին:

Ասոնց հակառակ, ո՞չ որբ, վերապրած մը իր ապրիլը վրէժ կը սեպէր: Եւ տեսակ մը հպարտութեամբ կ'ըսէր.

«Դուք զիս ոչնչացնել կ'ուզէիք, ես



կրցայ՝ ապրիլ, ապրեցայ եւ հինգ զաւակ ունիմ: Մէկի դէմ՝ հինգ»:

Այո՛, եղեռնը վերապրածներէն իւրաքանչիւրին կեանքը վրէժ է թշնամիին, իւրաքանչիւր զաւակը՝ չկրակուած փամփուշտ ...

Ինչ ձեւով ալ պատմեն, տխուր կնիք մը կայ ամէն մէկ խօսքէն, նայուածքէն կախ: Լաւ է, որ ապրեցան լաւ թէ վատ, ուրախ թէ տխուր, կարեւորը ապրիլն է: Անոնց ապրելով է որ յարատեւեց ազգս:

Այս գիրքն ալ ապրելու եւ ապրեցնելու ապացոյցներէն մէկն է, եւ այսօրուան երիտասարդները եթէ կարդան, գուցէ աւելի հասկանան, թէ ո՞վ են իրենք եւ ինչ պարտք ու պարտականութիւն ունին ազգին, կեանքին, իրենց ծնողներուն առջեւ: Հասկանան եւ փոխանցեն իրենց զաւակներուն...

Տայ Աստուած, որ այլեւս այդ տխուր բառերը անհետանան մեր խօսքէն, մեր միտքէն, մեր լեզուէն:

*Անժիկ Յակոբեան-Կանիմեան  
Աղեքսանդրիա*



## «ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ ՄԵԾՆ ԾԱՌԱՅ ԵԳԻՊՏՈՍԻ»

Վերջերս Գահիրեի մեջ հրատարակուած է ֆրանսերէնէ արաբերէնի թարգմանուած «Նուպար Փաշա Մեծն Ծառայ Եգիպտոսի» խորագրուած գիրքը, հեղինակութեամբ Վիքթորիա Արշարունիի եւ թարգմանութեամբ եգիպտահայ թարգմանիչ Կարօ Թապաքեանի:

Իր օրերուն յայտնի անուն էր Վիքթորիա Արշարունի Աղեքսանդրիոյ գաղութին համար, ուր եռանդուն գործունէութիւն կը տանէր միութենական աշխատանքի մէջ եւ պատասխանատու տիկիններէն մէկն էր Աղեքսանդրիոյ որբուհիներու տան, իսկ յետոյ Որբուհիներու Տիկնանց Յանձնաժողովին ատենապետուհին:

Նաեւ կը գրէր, բայց միշտ ֆրանսերէն, նոյնիսկ որբուհիներու տան նամակագրութիւնը – երբ ինք վարած է, ի բացակայութեան տան քարտուղարին, որ Ամերիկա մեկներ էր ուսումի համար – ֆրանսերէնով կատարէր է:

«1935 թուականի Ապրիլէն Տիկնանց Խնամակալութեան ատենապետուհի տիկ. Վիքթորիա Արշարունի ինք է, որ կը գրէ նամակները... ֆրանսերէն լեզուով, քարտուղարին՝ Յ. Աւագեանի Սեպտեմբերէն ի վեր գործէն դադրած ըլլալուն պատճառով» կը կարդանք «Որբուհիներու Տուները Գահիրէ եւ Աղեքսանդրիա» գիրքին մէջ:

Վիքթորիա Արշարունի ծնած է Երզնկա 1885 թուականին, հայ հօրմէ եւ ասորիացի մօրմէ:

Վիքթորիայի մայրը, կորսնցնելով ամուսինը, նախ կ'երթայ Սամսոն, քրոջ մօտ, Ապա Կոստանդնուպոլիս աշխատելու եւ ի վերջոյ կը հաստատուի Եգիպտոս, իր երեք անչափահաս զաւակներուն հետ:

Վիքթորիա Գահիրեի մէջ կը սկսի յաճախել ֆրանսացի մայրապետներու դպ-



Տիկին Վիքթորիա Արշարունի

րոցը, զոր աւարտելէ ետք կը մեկնի Փարիզ եւ կը վերադառնայ որպէս վկայեալ ուսուցչուհի: Բայց չի կրնար այդ ասպարէզով զբաղիլ, որովհետեւ 1905 թուականին կ'ամուսնանայ իր զարմիկին՝ Փարիզէն վկայեալ բժիշկ Եդուարդ Արշարունիի հետ, որուն կը պարտի հայութեան իր վերադարձը, գրական իր ճաշակին մշակումն ու նուիրումը:

Իր մասին այսպէս արտայայտուած է գրագետ Միքայէլ Կիրճեան, կարդալէ ետք իր գրութիւնները.

«Ձեր գրութիւնը յայտնութիւն մը եղաւ ինծի եւ անկասկած շատ մը գրողներու համար. յայտնութիւնը իսկական գրագետի մը, կնոջ մը մէջ, զոր ես ցարդ ճանչցած էի եռանդուն եւ նուիրեալ հայրենասէրի մը եւ տրամաբանութեամբ ու զգացումով լի հրապարակագրի մը գիծերով»:

«Որքան մեծ եղաւ զարմանքս, զգայուն եւ գործունէայ կնոջ մը մէջ գտնելով իսկական գրող մը, տաղանդաւոր, նրբաճաշակ, գեղեցիկ հոգիով, զգայնութեամբ եւ ինքնատպութեամբ լի գրող մը հոն, ուր ամենէն աւելի անյոյս կը թուէր»:

Ինքն է, որ Եգիպտոսի ՀԲԸՄիութեան առաջարկով կը հիմնէ որբուհիներու պաշտպանութեան Տիկնանց Յանձնախումբը, 1929 թուականին, որ կը գործէ մինչեւ 1934:

Գրած է նաեւ «Ալեակներ եւ Խլեակներ» «Հայ Վրանաքաղաքին Տարեգիրքը»-ին մէջ (կազմուած տոքթ. Մ. Սալբիի կողմէ), ստորագրելով «Տկարակազմներու Խոհանոցը» յօդուածը:

1932 թուականին լոյս կը տեսնէ «Մեր Դպրոցները գաղութներու մէջ – Ուսումնասիրութիւն Պօղոսեան, Գալուստեան, Նուպարեան, Պէրպէրեան վարժարաններու մասին» հատորը, բարեփոխում-



ներ առաջարկելով ուսման մակարդակը բարձրացնելու համար:

1945-ին կը գրէ Նուպար Փաշայի մասին գիրքը, որ լոյս կը տեսնէ Փարիզ, 1950 թուականին:

Այս գիրքին բնագիրը լոյս տեսած է 1950-ին, «Նուպար Փաշա (1825-1899)» խորագրով եւ “Un grand Serviteur de l’Egypt” ենթախորագրով:


Գիրքը պատկուած է Փարիզի Ֆրանսա-Եգիպտոս ընկերութեան (Association France-Egypt) Wacif Pacha Boutros Ghali մրցանակով:

Վիքթորիա Արշարունի մահացեր է 1971-ին, Աղեքսանդրիա, ուր եւ կը թաղուի:

Արաբերէն թարգմանութիւնը կը պարփակէ այն ամէնը, որ կը գտնենք ֆրանսերէն թարգմանութեան մէջ՝ սկիզբը բովանդակութեան մանրամասն ցանկ, ձօներ, 19րդ դարու օսմանեան կայսրերու անուններն ու տիրապետութեան ժամանակաշրջանը, 19րդ դարուն Եգիպտոսի խտիվներուն ցանկը, աղբիւրներ:

Արաբերէնի թարգմանիչ Կարօ Թապաքեան իր թարգմանութիւնը ձօնած է «Հայ-Եգիպտական մշակութային յարաբերութիւններու հոգեւոր հայր՝ տիար Պերճ Թէրզեանին»:

Արաբերէն հրատարակութիւնը լոյս տեսած է Եգիպտոսի ՀԲԸՄի Սաթենիկ Չագըր հիմնադրամին միջոցով: Գիրքը մեծ չափի է՝ 16x23 cm. եւ ունի 269 էջեր:



## ԳՆԱՀԱՏԱՆՔ ԳԱՂՈՒԹԻՍ

Ստացած ենք գնահատանք մը Եգիպտահայ գաղութի հասցէին, «Տեղեկատու»ին ընդմէջէն, զոր կը բաժնեկցինք մեր ընթերցողներուն հետ:

Դոկտ. Վաչէ Ղազարեան, ԱՄՆէն, կարդալէ ետք «Տեղեկատու»ի վերջին՝ 111րդ թիւը, կը գրէ.

**«Իսկապէս ճոխ բովանդակութեամբ համար մը ...**

**Կանայք, հայ կիներ, մայրեր, բազմապետակ ձեռնարկներ, արխիւային նիւթերու հրապարակութիւն, հեփաքրքրական հարցազրոյց, յարգանք արժանաւորներու: Ընթերցողը պիտի եզրակացնէ թէ Եգիպտահայ համայնքը, բարեբախտաբար, տակաւին ունի ազգային տրոփուն զարկերակ»:**

Շնորհակալ ենք դոկտ. Վ. Ղազարեանին, նախ որովհետեւ հաւաքարիմ ընթերցող մըն է մեր հանդէսին, ապա գնահատանքի իր ջերմ խօսքերուն համար:



## «ՇՈՒԼՑ» ԴՊՐՈՑԻ 100-ԱՄԵԱԿԸ

Գեղեցիկը կը ստիպէ ժպտալ...

*Արիստոտել*

Վերջերս ներկայ գտնուեցայ բարձր արուեստի հրավառութեան մը, որուն առիթը պարզ դպրոցի մը 100-ամեակն է:

Աղեքսանդրիոյ մէջ արդէն 100 տարիէ ի վեր կը գործէ ամերիկեան «Շուլց» դպրոցը: 1921 թուականին Ամերիկայի Աւետարանական եկեղեցին գնած է այս հողակտորը: 1924-ին հիմնադրուած է դպրոց մը միսիոնարներու երեխաներուն կրթութեան համար: Այսօր դպրոցը ազատ անկախ է՝ կ'առաջնորդուի Ամերիկեան կրթական ծրագրերով եւ կը կրէ առաջին միսիոնար-քարոզիչներէն մէկուն՝ Շուլցին անունը:

Շուլց Հոլանտացի միսիոնար մըն էր, որ Եգիպտոս եկած էր միսիոնարական գործունէութիւն ծաւալելու նպատակով: Շուլց գերմաներէն կը նշանակէ ապահովութիւն: Եւ իրապէս, դպրոցը իր սաներուն կ'ապահովէ այնպիսի ուսումով, որ ապագային գեղեցիկ ու ապահով կեանք ունենան: Ափրիկէի մէջ ամենէն հին օտար դպրոցներէն է: 100 տարեկան : Ուսուցչական կազմը սկիզբէն եղած են միսիոնարներ: Հետագայ տարիներուն եւ մինչեւ այսօր պարզ մասնագէտներ դասաւանդած են, միայն օտարներ: Աշակերտութիւնը վերջին տարիներուն կը համալրուի նաեւ տեղացի սաներով:

Այս տարի մեծ շուքով կը տօնուի դպրոցի հիմնադրութեան 100-ամեակը: Հարիւրամեայ տօնակատարութիւններու ձեռնարկներէն էր նաեւ այս ցուցադրութիւնը: Ճաշակով եւ խորհրդանշականօրէն յարդարուած պարտէզը սիրով կ'ընդունի բազմաթիւ հիւրեր: Կարմիր ուղեգորգով արահետ մը կ'առաջնորդէ դէպի պայծառ ու լուսաւոր ցուցասրահը, ուր աչք կը շոյեն բարձր արուեստի նմուշներ: Գորգին երկու կողմերը գրեթէ մարդկային չափերով արձաններ են, ժամանակակից վերացական (abstract) ոճի նկարներ, մոզայիք գործեր, փարաւոնական թեմաներով ստեղծագործութիւններ, որոնք այ-

ցելուները կը պատրաստեն կայանալիք մեծ հրավառութեան: Ցուցասրահը աւելի պայծառ լոյսերով, լայն ժպիտով կը դիմաւորէ այցելուները, որոնք ափ ի բերան կը շրջին արուեստով լեցուն սրահները: Իսկական գեղարուեստական ցուցադրութիւն է:

Եւ այս բարձրարուեստ ցուցադրութեան մէջ իրենց բարձր եւ արժանի տեղն ունին մեր հայրենակիցները: Նախ ըսենք, որ 100-ամեակը ողջունեց եւ շնորհաւորեց Եգիպտոսի մէջ ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչ՝ մեր հայրենակից՝ տիար Ռուբէն Յարութիւնեանը: Բոլորովին զարմանալի չէր ցուցադրութեան առաջին շարքերուն մէջ նկատել Եգիպտոսի հանրածանօթ արձանագործ Սարգիս Թօսունեանի ստեղծագործութիւնները, որոնք իրենց կայուն տեղն ունին Եգիպտոսի գրեթէ բոլոր ցուցադրութիւններուն մէջ: Արուեստագէտը ներկայացուած էր երկու ոչ մեծ արձաններով, որոնց ստեղծագործական ոճը առած, շատ այլ գործեր կան: Այո՛, հայ արուեստագէտը այսօր հետեւորդներ ունի եւ շատ: Մեծ սրահին կէսը տիար Թօսունեանի ոճով ստեղծագործութիւններ են, սակայն տարբեր տարիքի եւ սեռի արուեստագէտներու հեղինակած: Կրկանք ըսել, որ արուեստագէտ Սարգիս Թօսունեանը իր ոճով դպրոցի մը հիմնադիրն է արձանագործութեան մէջ:

Գեղեցիկ գործերու մէջ աչք կը շոյեն լուսանկարիչ, նոյնպէս աղեքսանդրիահայ Յովսէփ Օհանեանի լուսանկարչական գործերը: Քիչ է ըսել լուսանկար, կամ լուսանկարիչ: Պրն. Յովսէփը այն վարպետն է, որ արուեստի մակարդակին կը հասցնէ իր անմահացուցած ակնթարթները: Մենք պարզ մահկանացուներս, կը դիտենք, բայց չենք տեսներ, եւ անտարբեր կ'անցնինք: Արուեստագէտ լուսանկարիչը իր սուր աչքով կը նշմարէ, կ'ընկալէ եւ կ'անմահացնէ գեղեցիկ ակնթարթը: Աննման ակնթարթներու պատկերներ են



Նաեւ պատէն մարդոց հրաւիրող արուեստի գործերը: Իրական փարոսի մը պէս դէպի իրեն կը ձգէ Աղեքսանդրիոյ փարոսը, իմ կարծիքով՝ հին ու նոր փարոսները: Հին, որովհետեւ փարոսը տեսնելէ առաջ, կը տեսնենք ծովու ջուրերէն, դարերու տառապանքէն քայքայուած կտոր մը, որ ինծի աշխարհի 7 հրաշալիքներէն մէկը համարուող փարոսը յիշեցուց: Աղեքսանդրիոյ ծովափէն գեղեցիկ դրուագ մը, որ մութի ու մայրամուտի բոցերու մէջ է: Կը թուի թէ շառագունած ծովն ու ամպերը պայքարի մէջ են եւ տակաւին յայտնի չէ յաղթողը: Հրդեհուած ամպերը կը ջանան չզիջիլ մութին: Բարձր շէնքերը արեւին ու լոյսին խրոխտ մնալու կոչեր կը հնչեցնեն: Ծովն ու քաղաքը գրեթէ սուզուած են մութի մէջ, սակայն արեւը վերջին ճիգերը կ'ընէ լուսաւորելու ծովուն արծաթը: Աղեքսանդրիոյ ծովափը շիտակ գիծ մը կը նկատուի, բայց արուեստագէտի աչքը գեղեցիկ, չքնաղ կտորներ կը նշմարէ եւ կ'անմահացնէ:


Ցուցադրութիւնը խայտաբղէտ է ոչ միայն գոյներով, ոճերով, թեմաներով, այլ նաեւ տարիքային բազմազանութիւն կը տիրէ: Ներկայացուած են ամենամեծէն մինչեւ ամենաերիտասարդներ, մինչեւ աշակերտներ: Երիտասարդներու շարքին ալ մեր ներկայացուցիչներն ունինք: Իր մեղմ գոյներով եւ առանձնացող լուծումներով ուշադրութիւն կը գրաւեն եգիպտահայ երիտասարդ նկարիչ-ձեւաւորող Անդրո Պասմաճեանի գործերը: Հա-

գուստներ ձեւաւորող նկարիչը գեղեցիկ, ուշագրաւ եղանակով նորաձեւութիւնը կապեր է եգիպտական հնագոյն, փարաւոնեան ճարտարապետութեան: Գեղեցիկ եւ ճաշակով են համադրուած գունային անցումները: Ցուսանք, որ երիտասարդ սերունդը պարապ չի՝ ձգեր եգիպտահայերու զբաղեցուցած տեղերը համաքաղաքային եւ համապետական ձեռնարկներուն մէջ: Ցուցադրութեան մաս կը կազմեն նաեւ աշակերտութեան աշխատանքները եւ նկարները:

Գեղեցիկ գործեր շատ կան, բայց գոյներու խայտաբղէտ աշխարհին մէջ լոյսի մը պէս կը ճառագեն մեծ վարպետներուն աշխատանքները: Հրաւիրուած են եգիպտոսի ամենամեծ արուեստագէտները, գեղարուեստի համալսարանի դեկաններն ու մեծ վարպետները: Դիտելով բարձրարուեստ գործերով յագեցած սրահները, հոգիդ կը փառաւորուի մարդուն ձեռքի ու մտքի տաղանդաւորութեամբ:

Կը դիտես ցուցադրութիւնը եւ կը խորհիս, որ այսքան մեծ եւ գեղեցիկ ցուցադրութիւն պատրաստած դպրոց մը պէտք է որ գիտելիքի, աշխարհաճանաչողութեան, արուեստի գնահատման, բարձր ճաշակի դարբնոց ըլլայ: Եւ ակամայ կը մտաբերես դպրոցի անուանումը՝ «Շուլց» - ապահով:

*Անժիկ Յակոբեան Կանիմեան  
Աղեքսանդրիա*





## ԱՎՆԹԱՐԹՆԵՐ ԱՆՄԱՀԱՑՆՈՂ ՎԱՐՊԵՏԸ

Արուեստը նկարչից կը պահանջէ  
ակնթարթը կանգնեցնելու կարողութիւն

Ե. Քոչար

Լուսանկարչութիւնը նոյնպէս պահը կանգնեցնելու մասին է, իսկ եթէ պահը գեղարուեստական է, խօսուն, իմաստալից, արդէն արուեստ է: Այն պատկերը, որ իր վրայ կը գամէ մարդուն հայեացքը եւ քիչ մը խորհելու առիթ կու տայ, արդէն երեւոյթ է, եւ եթէ կեանքի վերարտադրութիւնն է եւ գեղեցիկ, ուրեմն արուեստ է:

Կեանքի գեղեցիկ պահեր որսալու եւ անմահացնելու շնորհալի վարպետ է եգիպտահայ լուսանկարիչ տիար Յովսէփ Օհանեանը: Ան այն վարպետն է, որ արուեստի մակարդակին կը հասցնէ իր անմահացուցած ակնթարթը: Անմահացուցած գեղեցիկ պահերու խոշոր շտեմարան ունի արուեստագէտի աչք ու ճաշակ ունեցող լուսանկարիչը: Լուսանկարել լոյսով պատկեր քաշելը չէ սոսկ: Լուսանկարել կը նշանակէ լոյս սփռել այն պահերուն եւ երեւոյթներուն վրայ, որ շատեր կը նշմարեն, սակայն չեն տեսներ, կամ... լոյս սփռել եւ յաւերժացնել այն պատկերը, որ մարդ յաճախ կը տեսնէ, ետքը կ'ուզէ յիշել, բայց... Պարզ մահկանացուներս, կը դիտենք մեր շուրջը, կը տեսնենք գեղեցիկը, կը գմայլինք, բայց քիչ ետք, երբ ուզենք մտաբերել, չենք կրնար: Այդ պահուն է, որ մեզի օգնութեան կը հասնի արուեստագէտը:

Տիար Յովսէփը այն արուեստագէտն է, որ մեզի կը պարգեւէ գեղեցիկ պահեր տեսնելու, վայելելու հաճոյքը: Անոր գործերուն նիւթը մեր կեանքն է, մարդը, ծովը իր ամբողջ հմայքով՝ գիշեր թէ ցերեկ, ամառ թէ ձմեռ: Պրն. Յովսէփ մասնագիտութեամբ լուսանկարիչ չէ: Հաշուապահ է եւ պատմաբան: Սակայն թիւերու եւ պատմական փաստերու ճշգրիտ աշխարհը շատ սրտամօտ չէ: Հոգին գեղեցիկի ու բարձր թռիչքներու աշխարհին կը ձգտի: Լուսանկարելը սիրելի զբաղումն է, որ աւելի հետաքրքրական կը դարձնէ արուեստագէտի հոգի ունեցող մարդու առօրեան: Նուրբ հոգի եւ պայծառ երեւակայութիւն ունեցող մարդը միայն կրնայ տեսնել եւ անմահացնել կեանքի գեղեցիկ ակնթարթները: Այն հրամանատարն է, որ գիտէ երբ հրաման տալ գործիքի կոճակին: Սակայն ամէն անգամ չէ որ կարելի կ'ըլլայ հրաման արձակել ուզած պահուն, կամ ուզած տեղը. հոս արելը բարձր է, կամ լոյսի անկիւնը ճիշդ չէ, կամ մինչ ամպերն ու արելը յարմարեցան, մարդը, կամ նկարելիք առարկան կը տեղաշարժին:

Նկարներէն մէկը դիտելով չենք կրնար երեւակայել, թէ որքան ժամանակ պահանջուած է այս պարզ նկարին համար:





Բաւական երկար ժամանակ առաւ մինչեւ ուղտերը ճիշդ դիրք ընդունեցին: Միշտ չէ որ ուզած պահուդ բնութիւնը քեզի կը պարգեւատրէ եւ ուզածներդ կը յայտնուին միաժամանակ: Եթէ փնտռածդ արեւը այսօր չգտար, ուրիշ օր մը կը գտնես, գոյներու պարը կարճատեւ է, վաղը ծիածան կ'ըլլայ, բայց կան պահեր ալ, որ փախցուցիր, այլեւս չեն վերադառնար:

Մահմետական երկրի մը մէջ նկարիչը այլ դժուարութիւններ եւս ունի: Ամէն պահու դիւրին չէ պատկեր քաշել: Գրուած եւ չգրուած օրէնքներ կան, մարդը ազատ չէ իր բոլոր շարժումներուն եւ գործողութիւններուն մէջ: Ինչպէս ամէն գործ, լուսանկարչութիւնն ալ իր ոչ դիւրին պահերն ունի:

Լուսանկարիչներու գործերը քիչ չափով կը դիւրացնէ Լուսանկարիչներու Ակումբը: Տիար Օհանեան այս ակումբին անդամ է եւ ակումբին միջոցով կը տեղեկանայ տեղական եւ միջազգային ցուցադրութիւններուն եւ կը մասնակցի անոնց: Վերջին չորս տարիներու ընթացքին Եգիպտոսի մէջ քսան, եւ միջազգային

վեց ցուցադրութեան մասնակից եղած է: «Աշխարհի լիճերը» միջազգային ցուցադրութեան ներկայացուցած էր «Սեւանա լիճը», որ յաղթանակ բերաւ մեր շնորհալի նկարիչին: Չինաստանի մէջ եղած միջազգային ցուցադրութեան առաջնութիւն առաւ «Նեղոսը» նկարը: Եւ այսպէս շարունակ...

Ժամանակակից ցուցադրութիւններուն մեծ մասը կ'անցնին համացանցին միջոցով: Մեր օրերուն շատ դիւրին է քով քովի գալ, զիրար գտնել, միասին մտածել... Համացանցին միջոցով գաղափարակից մարդիկ շատ դիւրաւ կը գտնեն զիրար եւ մտքեր, գաղափաներ կը փոխանակեն, միասին ցուցադրութիւններ կը ձեռնարկեն: Եւ ի յայտ կու գայ արուեստի գեղեցիկ աշխարհ մը, որ ուրախութիւն կը պարգեւէ շատերուն: Կ'ըսեն թէ արուեստը մեր կեանքին գեղեցիկ արտացոլումն է: Իսկ արուեստ ստեղծողները՝ մեր կեանքին բարի կախարդները, մէկը իր վրձինով, մէկը իր շարժումներով, մէկը իր ձեռքերով, մէկը նկարող գործիքով, բոլորը մտքի գունաւոր թռիչքներով կը գեղեցկացնեն մեր աշխարհը: Ինչի՞ նման կ'ըլլար մեր կեանքը, եթէ արուեստը չըլլար:


Արուեստը արեւի նման է եւ առանց արեւի անհնար է ապրել:

*Անժիկ Յակոբեան Կանիմեան  
Աղեքսանդրիա*





## «ՉԱԳՐՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ (2022-2024)



ՀԲԸՄԻ աշխատանքային ծրագիրներու ծիրին մէջ, մշակութային գործունէութիւն խորագրին տակ կ'իյնայ նաեւ գիրքերու հրատարակութիւնը:

Միութիւնը միշտ ալ նանձախնդիր եղած է հրատարակելու այնպիսի գիրքեր, մանաւանդ արաբերէնով, որոնք մեզ քիչ մը աւելի ծանօթացնեն Եգիպտոսի ժողովուրդին, որուն մէջ կ'ապրի գաղութը աւելի քան դարէ մը ի վեր, բայց ժողովուրդին մեծ հասարակութիւնը այնքան ալ ծանօթ չէ մեզի:

Բարեբախտաբար ակադեմական շրջանակներու մէջ այս ծանօթացումը եղած է տարբեր միջոցներով, ինչպէս կարկառուն հայերու գոյութեամբ՝ Նուպար Փաշա՝ առաջին Արտաքին Գործոց նախարարն ու երկրին վարչապետը, Եագուպ Արթին՝ Եգիպտոսի Կրթութեան առաջին նախարարը, Պօղոս Նուպար փաշա, կամ Ալեքսանդր Սարուխան, որուն ծննդեան 125 ամեակը մեծ շուքով տօնուեցաւ վերջերս Գահիրէի Օփերայէն ներս:

Անցնող շրջանին հայերէն լեզուով հինգ եւ անգլերէնով մէկ գիրքեր լոյս տեսան Չագրը Հիմնադրամի «Արխիւ» մատենաշարէն, որոնց մասին կ'ուզէինք մանրամասն խօսիլ:

1-ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄԻ «ՏԵՂԵԿԱՏՈՒ» ԵՌԱՄՍԵԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (2022)

«Տեղեկատու»ի 100րդ թիւը, որ կը զուգահիշէր անոր նոր շրջանի 25-ամեակին, ամբողջովին անտես անցաւ, որովհետեւ թագածահրին եւ մեկուսացումի ամենէն խիստ շրջանին էր:

Այս կարեւոր շրջադարձը հանդիսութեամբ մը տօնելու անկարելիութեան առջեւ, յարմար նկատուեցաւ փրոֆ. Սուրէն Սարգսեանէն խնդրել, որ հատոր մը պատրաստէ անոր մասին:

Հատորը լոյս տեսաւ Գահիրէի մէջ, 2022 թուականին, որպէս ՀԲԸՄԻ Գահիրէի «Տեղեկատու» եռամսեային Ապրիլի շրջանի թիւ 103 յաւելուած:

Գիրքին հրատարակման գործընթացը համադրած է տիար Պերճ Թէրզեան, իսկ խմբագիրն է դոկտ. Մ. Երամեան:

Հատորը կը բաղկանայ յառաջաբանէ մը եւ ութ գլուխներէ, որոնք կ'անդրադառնան այս պարբերաթերթին մէջ երեւցած գլխաւոր նիւթերուն, ինչպէս «Խմբագրական Մտորումներ», ՀԲԸՄԻ գործունէութեան արտացոլումը «Տեղեկատու»ի էջերուն մէջ, ՀԲԸՄԻ 100-ամեակը, «Ծիածան» մանկական երգչախումբը, հայ-եգիպտական կապերը, ինչպէս եւ այս բոլորին հետեւող եզրակացութիւններ:

Գիրքը փոքր չափի (16x23 cm.) է եւ կը բաղկանայ 122 էջերէ:

2-ՊՈԼՍՈՅ 1860-Ի ԵՒ ԳԱՀԻՐԷԻ 1906-Ի ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (2023)

Երուանդ Գրիգոր Աղաթօնի հեղինակութիւնը եղող այս գիրքը երրորդ հրատարակութիւնն է. առաջինը կատարուած է ժընեվ, 1935 թուականին, եւ մեզի կը թուի թէ սպառած է արդէն:

Մեր արխիւներուն մէջ գտանք այս առաջին հրատարակութեան պատճենահանուած օրինակը, եւ անոր կարեւո-





րութիւնը գիտակցելով, որոշեցինք վերատպել զայն: Այդ երկրորդ հրատարակութեան մէջ զանց առած էինք երկար ցանկը ՀԲԸՄիութեան առաջին անդամներուն:

Երբ այս երկրորդ հրատարակութիւնը (2019) եւս սպառեցաւ, ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ դուրս. Ճորճ Սիմոնեանի որոշումով երրորդ հրատարակութեան ձեռնարկեցինք, այս անգամ ներառնելով նաեւ առաջին անդամներուն ցանկը:

Երուանդ Գրիգոր Աղաթօնի այս հեղինակութիւնը թէեւ փոքր, բայց պատմական կարեւոր տեղեկութիւններ խտացնող գիրք մըն է, որուն մէջ կը բացայայտուի բարեգործական միութիւն մը հիմնելու առաջին փորձը, հեղինակին հօր՝ Գրիգոր Աղաթօնի կողմէ, որ դժբախտաբար, երկու տարի ապրելէ ետք կը դադրի, քսու չարախօսութիւններու պատճառով:

Գրիգոր Աղաթօն (ինք իր մականունը ո-ով, իսկ իր զաւակը՝ օ-ով գրած է) եղած է մէկը 1860-ի Ազգային Սահամանադրութիւնը ձեւաւորող խումբէն:

Այս հատորին մէջ, ՀԲԸՄիութեան ստեղծումին մանրամասները կը յիշուին, որոնց ընթացքին կը ծանօթանանք 20-րդ դարու սկիզբը ապրող եգիպտահայութեան, ինչպէս նաեւ այլ գաղութներու մէջ ապրող հայերուն եւ անոնց սովորութիւններուն:

Իր պարզ ոճին շնորհիւ, այս գիրքը հեզասահօրէն կ'ընթերցուի, գեղեցիկ պատմութիւն մը, բարի հէքեաթ մը մտիկ ընելու հաճոյքով:

**3-ՎԱԿԵՐԱԳՐԵՐ ԱՌՆՉՈՒԱԾ ՏԱՐՕՆԻ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ (2023)**

Այս գիրքին մէջ ամփոփուած են երեք կարեւոր գրութիւններ. ՀԲԸՄիութեան արխիւներուն մէջ գտնուած առաջին երկու ձեռագիր-պատճենները կը կրեն ստորագրութիւնը Սիմոն Զաւարեանի, որ իբրեւ Տարօնի ազգային դպրոցներու ընդհանուր տեսուչ, կը ղրկուի Մուշ, ուր կը մնայ մինչեւ 1911 թուականը: Հոն, մօտէն կը ծանօթանայ տիրող կացութեան եւ իր նպաստը կը բերէ բարենպաստ պայմաններու ստեղծումին: Այդ մասին են գիրքին երկու բաժինները:

Երրորդ ձեռագիրը «Կիլիկիա Ճեմարան»ին ստեղծումի պատմականն է եւ այդ վարժարանին կրթական ծրագիրը ամբողջութեամբ, որուն մանրամասնութիւնները իրապէս կը տպաւորեն ընթերցողը, հոն դասաւանդուած նիւթերուն բազմազանութեամբ եւ էականութեամբ:

**4-ՃԱՆԻԿ ՉԱԳԸՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ (2023)**

Այս հատորը կը խմբէ եգիպտահայ կարկառուն դէմքերէն մէկուն՝ Ճանիկ Հայկ Չագըրի 1916-1919 շրջանին իր խօսեցեալին՝ Սաթենիկ Թոփալեանին գրած նամակները, Գահիրէէն Մանչեսթըր:

Թէեւ ճիշդ 108 տարիներ անցած են այս հատորին առաջին նամակին գրութենէն, սակայն նամակներու ամբողջութիւնը կը պահէ իր հետաքրքրականութիւնը, քանի մը մակարդակներու վրայ՝ անհատական, եգիպտական թէ գաղութային:

Պէտք է նշել նաեւ, որ հրատարակուած նամակները միայն Ճանիկ Հ. Չագըրի գրածներն են, առանց Սաթենիկ Թոփալեանի պատասխաններուն:

Թէ ինչո՞ւ հրատարակուած են այս նամակները, հակառակ իրենց անձնական բնոյթին:

-Այս նամակները կարեւոր են, որովհետեւ սեւեռումի կը բերեն ՀԲԸ Միութեան կազմակերպիչ խումբին եւ առաջին յանձնախումբին անդամներէն մէկը, որպէս անհատականութիւն, մտածելակերպ եւ աշխատելաձեւ:

-Լուսարձակի տակ կ'առնեն Համաշխարհային Ա. Պատերազմի շրջանը եգիպտոսի մէջ ընդհանրապէս եւ եգիպտահայ գաղութին կեանքը մասնաւորապէս:

-Կը նկարագրեն կարեւոր դէպքեր եւ իրադարձութիւններ, որոնք կրնային մութ մնալ, Համաշխարհային Ա. Պատերազմին ստեղծած թոհուրոհին մէջ:

-Մանրամասնօրէն կը նկարագրեն Փոր-Սաիտի գաղթականներուն վրանաքաղաքը, որովհետեւ Ճ. Չագըր գործունեայ անդամ մըն էր գեմփով զբաղող յանձնախումբին:

-Կը յիշեն անունները եւ նկարագրերը եգիպտահայ գաղութի անդամներէն ոմանց, որոնք դեր ունեցած են գաղու-



թահայ կեանքին մէջ, բայց որոնց անուններն ու կեանքին մանրամասնութիւնները կորսուած են, ինչպէս օրինակ Կամսարական եւ Մելքոնեան ընտանիքները:

-Կը նկարագրէ Եգիպտոսի կարելոր վայրերը - ինչպէս Լուքսոր, ուր յաճախ գացած է գործի բերումով - հողագործութեան ու մանաւանդ այգեգործութեան եւ գինեգործութեան սկիզբի շրջանը, ինչ որ կարելոր կը նկատենք Եգիպտոսի այդ ժամանակաշրջանի պատմութեան համար:

-Մանրամասնօրէն կը նկարագրուի Հայկական Կարմիր Խաչի կազմակերպումը Եգիպտոսի մէջ:

-Նամակներէ զատ այլ թուղթեր եւ՝ նուագահանդէսներու յայտագրեր, տեղի եւ ժամանակի արձանագրութեամբ, որոնք այնքան շատ բան կրնան բացայայտել 1917-ականներու Գահիրէի մասին՝ սրահներ, որոնք յիշուած են իրենց ճշգրիտ եւ ամբողջական հասցէներով, ելոյթ ունեցած արուեստագէտներուն եւ երաժիշտներուն անունները, որոնցմէ շատեր այցելու եղած են Գահիրէ (Նամակ թիւ 26):

-«Կանոններ» խորագրուած առանձին թուղթ մը, ուր ներկայացուած են “Keep smiling” կազմակերպութեան 12 կէտերէ բաղկացած կանոնները:

70 նամակներ, երեք տարիներու վրայ երկարող, մօտաւորապէս տարին 23, ամիսը՝ 2 նամակ միջինով:

Գիրքը հրատարակուած է իր բնագրով՝ անգլերէնով, որովհետեւ Սաթենիկ Չագրը, թէեւ Պոլիս ծնած, սակայն երկու տարեկանին ծնողքին հետ Մանչեսթըր փոխադրուած, առիթ չէ ունեցած հայկական վարժարան յաճախելու. թէեւ հայերէն կը խօսէր, սակայն շատ աւելի սահուն եւ ազատ կերպով անգլերէն գրելով է որ կ'արտայայտուէր:

**5-ՈՐԲՈՒՀԻՆԵՐՈՒ ՏՈՒՆԵՐԸ ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (2023)**

Այս գիրքը եւս քաղուած է ՀԲԸՄիութեան հարուստ արխիւներէն, եւ կը ներկայացնէ շատ կարելոր շրջան մը՝ 1915-ի որբուհիներուն ճակատագիրը, որբանոցներէն դուրս գալէ ետք, որովհետեւ օրէնք էր, որ 18 տարեկան որբուհիները (տարիքային այս սահմանը 16 էր որբերուն հա-

մար) դուրս ելլէին որբանոցներէն, այլ որբուհիներու տեղ տալու համար, եւ իրենց կեանքը կարենային դասաւորել:

Գահիրէի, ապա Աղեքսանդրիոյ մէջ հիմնուած այս տունները պատասպարած են Յունաստանի Սիրիի որբանոցին փակումէն ետք անպատասպար մնացած որբուհիները, որոնք շրջան մը Յունաստան մնալէ ետք, Նիր Իսթ Ռիլիֆի ջանքերով ղրկուած են Եգիպտոս, ուր մեծ եւ արդէն կազմակերպ գաղութ մը կար, եւ յանձնուած են Գահիրէի Ազգային Առաջնորդարանին: Սակայն նկատի առնելով, որ որբուհիները իրապէս կարիքը ունէին իրենց վիճակը հասկցող տիկիներու, Առաջնորդարանը կը մտածէ զիրենք յանձնել ՀԲԸՄիութեան:

Միութիւնը տիկիներէ կազմուած յատուկ Յանձնախումբ մը կ'առաջացնէ այս որբուհիներուն կարիքները քննարկելու եւ ըստ այդ անոնց պէտքերը հոգալու համար:

Տարի մը ետք որոշում կ'առնուի Աղեքսանդրիոյ մէջ եւս նման տուն մը հիմնելու, նկատի առնելով որ այնտեղ եւս կ'ապրէր որոշ թիւ մը որբուհիներու:

Այս դեռատի աղջիկները ընդհանրապէս աշխատանքի անցած են հայ թէ օտար ընտանիքներու մօտ, յաճախ որպէս առտնին օգնականուհի, երեխաներու հոգածու կամ տարէցներու ընկերակցուհի: Անոնց յարաբերութիւնները իրենց տիրուհիներուն կամ տէրերուն հետ երբեմն եղած են ոչ հեզասահ, կարգ մը անձեր փորձած են օգտուիլ անոնց մատղաշ տարիքէն եւ աշխատոցնել զիրենք առանց աշխատանքին վարձքը վճարելու: Եղած են բաւական հիւանդներ, որոնք անմիջական օգնութեան՝ սանաթօրիումներ ղրկուելու կարիքը ունեցած են:

Եղած են նաեւ որբուհիներ, որոնց ուսումի հանդէպ ունեցած սէրը մղած է յանձնախումբին տիկիները, որ իրենց կարելի ընեն, անոնց ուսում ջամբելու համար, ինչպէս օրինակ Ճօշկունեան քոյրերը, որոնք Փարիզի Ուսումնասիրաց վարժարանը ղրկուէր են ուսանելու համար:

Որբուհիներուն կէսէն աւելին ամուսնացեր եւ ընտանիք կազմեր է, երբեմն նաեւ շնորհակալութեան գիրք ուղարկելով Տիկնանց Յանձնախումբին: *շար. էջ 33* →



## ՀԲԸՄԻՈՒԹԻՒՆԸ ՎԱՂՈՒՑ

ՀԲԸՄիութեան Գահիրէի գրասենեակներուն մէջ մեծ գուրգուրանքով պահուած է այն կահոյքը, որ օգտագործուած էր Տապպաղին փողոցին վրայ գտնուող Միութեանս առաջին գրասենեակ-յարկաբաժնին մէջ:

Միութիւնը երկու անգամ կեդրոն փոխած է՝ Տապպաղինէն ետք Էմատ Էլ Տին կեդրոնը, ապա 2013 թուականին փոխադրուած է այժմու կեդրոնը՝ 26 Մուրատ Պէկ փողոցին վրայ, Հելիոպոլսոյ մէջ:

Վարի երկու լուսանկարները ցոյց կու տան այդ կահոյքէն մաս մը, որ մինչեւ օրս կ'օգտագործուի՝ առաջին լուսանկարին աջին երեւոյղ մեծ պահարանը, երկրորդ նկարին Մալէզեանի գրասեղանը, որուն ետին, պատին վրայ երեւոյղ երկու մեծ գեղանկարները եւս՝ գործ 19րդ դարու իտալացի նկարիչի մը, կը գտնուին պահուած բազմաթիւ գեղանկարներուն մէջ:

Գեղեցիկ եւ ազնուական ոճով այս կահոյքն ու գեղանկարները ամբողջ դար մը եւ աւելի - ճշգրիտ ըլլալու համար՝ 118 տարի, հիմնադրութեան թուականէն՝ 1906-էն ի վեր - իրենց մէջ պահած են Միութեանս պատմութիւնը, եւ այսօր Կեդրոնս այցելող հայ թէ օտար հիւրերուն հիացմունքին առարկան են:

Գեղեցիկ եւ ազնուական ոճով այս կահոյքն ու գեղանկարները ամբողջ դար մը եւ աւելի - ճշգրիտ ըլլալու համար՝ 118 տարի, հիմնադրութեան թուականէն՝ 1906-էն ի վեր - իրենց մէջ պահած են Միութեանս պատմութիւնը, եւ այսօր Կեդրոնս այցելող հայ թէ օտար հիւրերուն հիացմունքին առարկան են:



ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱԶԵՐԻՔԻ ՏԵՂ. ՄԱՍՆԱՅԻՆՈՎ



ԸՆԿՆ. ԳՐԱՏՈՒՂԱՐ Տ. Վ. ՄԱԼԷԶԵԱՆԻ ԳԱԶԵՐԻՔԻ ԳՐԱՍԵՂԱՆԻ ՄԵՋ

### → շար. էջ 32-էն

Այս բոլորը կը գտնուին ղրկուած եւ ստացուած նամակներուն մէջ, որոնցմէ քաղուած է այս գիրքը, կարելոր փաստաթուղթ մը դառնալով այս տուններուն մասին, որոնք գրեթէ մոռցուած են այսօր:

Գիրքը հարուստ է բազմաթիւ լուսանկարներով եւ վաւերաթուղթերու պատճեններով:

Գիրքը կազմուած է եւ խմբագրուած դոկտ. Մարուշ Երամեանի կողմէ, որ գրած է անոր յառաջաբանն ու ծանօթագրութիւնները եւս:

### 6-ՄԱՐԴՆՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ (2024)

Գիրքը կարապի երգն է աղեքսանդրահայ փաստաբան եւ մտաւորական Ստեփան Շահպազի (1900-1993):

Հատորը կը բաղկանայ 70 թուագրուած կարճ ու երկար – երբեմն շատ երկար – գլուխներէ, որոնք ոչ միայն կը ներկայացնեն մարդ արարածին ձեռքերուն տարբեր տեսակներն ու անոնց առնչութիւնները անձին հետ, այլ նաեւ կը հասնին այնպիսի խորացումներու, որոնք ընթերցողը ափ ի բերան կը ձգեն:

Այս հատորը սկսուած է հեղինակին կեանքի 83րդ տարին եւ աւարտի հասած մէկ տարի ետք. այլ խօսքով՝ իր մտորումները կը խտացնեն կեանքի մեծ փորձառութիւն մը, որ յաճախ եթէ ցաւալի եղած է հեղինակին համար, սակայն կարելոր է ընթերցողին, ո՛չ միայն կեանքը դիտելու, այլ նաեւ ժամանակի կարելոր դէմքերուն մասին տեղեկութիւններ ունենալու համար, ինչպէս է պարագան օրինակ Տիգրան Կամսարականին հետ հեղինակին ունեցած հանդիպումին:

Հատորը լոյս տեսած է որպէս ՀԲԸՄի «Ս. Չազըր» հիմնադրամի մատենաշար (թիւ 6) եւ հրատարակութեան պատրաստուած եւ խմբագրուած է դոկտ. Մ. Երամեանի կողմէ: Կը բաղկանայ 213 էջերէ:

Հատորը լոյս տեսած է որպէս ՀԲԸՄի «Ս. Չազըր» հիմնադրամի մատենաշար (թիւ 6) եւ հրատարակութեան պատրաստուած եւ խմբագրուած է դոկտ. Մ. Երամեանի կողմէ: Կը բաղկանայ 213 էջերէ:



## ՊԵՏՐՈՍ ՓԻԱՆՏԱՐԵԱՆ (1931-2024)

ՀԲԸՄիության Կեդրոնական Վարչությունն (Նիւ Եորք) ու Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւնը խոր վիշտով կը ծանուցեն նախկին եգիպտահայ, Աղեքսանդրաբնակ Պետրոս Փիանտարեանի մահը, որ տեղի ունեցեր է 5 Յունիս 2024-ին, 93 տարեկան հասակին: Աղեքսանդրիոյ «Տիգրան Երկաթ» Մշակութային Միութեան, Հայկական Բարեգործական



Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) եւ Թէքէեան Մշակութային Միութեան (ԹՄՄ) անդամներն ու ընկերները կը սգան իրենց գործունեայ անդամին շիջումը: Պետրոս Փիանտարեան, Աննայի սիրելի ամուսինը, Էլիզապէթի (Բրայն) եւ Էլիսընի հայրը ապրեցաւ երկար եւ լիարժէք կեանք մը, զոր շատեր միայն կ'երագէին ապրիլ: Համաշխարհային ճանապարհորդ՝ ան սահուն կերպով չորս լեզուներ կը խօսէր:

Փիանտարեան եղեր է «Տիգրան Երկաթ» Մշակութային Միութեան երկարամեայ անդամ, աջակից, ՀԲԸՄիութեան Կեդրոնական Տնօրէններու Խորհուրդի անդամ եւ անոր աշխարհասփիւռ դպրոցներուն եւ մասնաճիւղերուն տնտեսական կառավարիչը, ինչպէս նաեւ Թէքէեան Մշակութային Կեդրոնական Տնօրէններու Վարչութեան գանձապահը:

Թոշակի անցած ըլլալուն հակառակ, Փիանտարեան կը շարունակէր իր ծառայութիւնը ՀԲԸՄիութեան մէջ (Նիւ Եորք): Փիանտարեան կը սիրէր երաժշտական համերգներու երթալ, ծովեզերքի արե-

ւը վայելել եւ բնութեան գրկին մէջ իր ժամանակը անցնել:

Բայց ամենէն առաջ եւ ամենէն աւելի ան կը սիրէր իր ընտանիքը, որոնց կողմէ անվերապահօրէն կը սիրուէր նաեւ, բնականաբար:

Մինչեւ իր վերջին օրերը Պետրոս Փիանտարեան կ'աշխատէր «Տիգրան Երկաթ» Մշակութային Միութեան 120-ամեակի հան-

դիսութեան պատրաստութիւններուն համար: Տօնակատարութիւնը կը նախատեսուի առցանց սփռել, աշխարհի մէջ ցրուած Միութեան բոլոր համակիրներուն համար:

Այս ծրագիրը պիտի կատարուի նախատեսուած ժամանակին, նաեւ որպէս յարգանքի տուրք մը Պետրոս Փիանտարեանի յիշատակին:

Հիմա որ Փիանտարեան միացեր է իր ծնողքին, եղբօր եւ քոյրերուն, ան կը յիշուի որպէս հոգատար, առատաձեռն անձ, որ ուրախութիւն կը բերէր բոլոր անոնց, որոնց հետ կը հաղորդակցէր:

Իր մահուան սուգին առիթով խնդրուէր է նուիրատուութիւններ կատարել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (55 E 59th St., New York, NY 10022), կամ Աուրիզմ Նիւ Ճրրզիի (500 Horizon Dr. # 530, Robbinsville Twp, NJ 08691):

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցեր է Չորեքշաբթի, 12 Յունիս 2024-ին, Ճորճ Ուաշինկթըն համալիրին մէջ (234 Paramus Rd, Paramus, NJ 07652):



## ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Այստեղ կը ներկայացնենք երկու պատմական եւ արժեքաւոր լուսանկարներ Մանիսալեան Բարձրագոյն վարժարանէն, եգիպտահայ կեանքին սերտօրէն առնչուած:

Վարժարանը կոչուած է Մանիսալեան Բարձրագոյն Վարժարան (աղջկանց), հիմնուած 1905 թուականին, Գահիրէի Ապպաս պողոտային (այսօր՝ Ռամսէս) վրայ գտնուող թիւ 104 վարձու շէնքին մէջ: Հիմնարկին տնօրէնուհիները եղած են Զարուհի եւ Սոֆի Մանիսալեան քոյրերը: Հակառակ անունին՝ Բարձրագոյն, վարժարանը ունեցած է նախակրթարանի եւ միջնակարգի բաժիններ, ուր ուսումը ծրագրուած է Եւրոպայի եւ Ամերիկայի ուսումնական ծրագիրներուն հետեւողութեամբ:

Նախակրթարանը աւարտող աշակերտուհիները կը ստանան Certificat d'Etudes primaires, իսկ վարժարանին ամբողջ շրջանը աւարտող աշակերտուհիները կը ստանան Diplome, որ համարժէք է ֆրանսական Brevet Supérieur-ին:

Ա. Մանիսալեան քոյրերու վարժարանին 1928-ի շրջանաւարտութեան լուսանկարներէն մէկը. 24 Յունիս 1928, մէջտեղը ձախին մեծ քոյրը՝ տնօրէնուհիներ Զարուհի եւ Սոֆի Մանիսալեան: Ձախէն առաջինը Հերմին Պզտիկեան-Չաքրճեան (Քրիստին Չաքրճեան-Վարվառեանի մայրը)

Բ. Նոյն դպրոցէն ստացուած վկայա-

կան մը, որ գրեթէ մէկ դարու հնութիւն ունի:

Այս թանկագին վկայականը ստացել ենք տիկին Քրիստին Չաքրճեան-Վարվառեանէն, որուն մօրը՝ Հերմինէ Պզտիկեանին պատկանած է:

Ուշադրութիւն պէտք է դարձնել այս վկայականին բոլոր մանրամասնութիւններուն, որոնք շատ բան կը պատմեն Մանիսալեան քոյրերուն հիմնած վարժարանին մասին:

Ա-Ֆրանսական հիւպատոսարանին կնիքը:

Բ-Օրուան Առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեանի ստորագրութիւնը:

Գ-Ստորագրութիւնները դպրոցի հիմնադիր տնօրէնուհի՝ Սոֆի Մանիսալեանին եւ «Ուսուցչական Մարմին»ին մէջ՝ Զարուհի Մանիսալեանին:

Դ-Հայերէնին կողքին ֆրանսերէնին ներկայութիւնը վկայականին վրայ:

Ե-Հայերէնին մէջ օգտագործուած բառերը՝ քաջալաւ, քաջ, լաւ:

Զ-Դասաւանդուող 20 նիւթերուն ցանկը՝

1. Կրօն եւ եկեղեցական պատմութիւն
2. Հայերէն եւ գրագիտութիւն
3. Ազգային պատմութիւն
4. Ընդհանուր պատմութիւն
5. Ֆրանսերէն լեզու
6. Անգլիերէն լեզու
7. Արաբերէն լեզու
8. Թուաբանութիւն եւ երկրաչափութիւն
9. Աշխարհագրութիւն եւ տիեզերագրութիւն
10. Առտնին տնտեսութիւն
11. Գեղագրութիւն հայերէն եւ ֆրանսերէն
12. Գծագրութիւն, նկարչութիւն
13. Բնական պատմութիւն
14. Կար եւ ձեւագիտութիւն
15. Ձեռագործ եւ հիւսուածք
16. Քարտիսագծութիւն (դաշնակի փոխարէն)



շար. էջ 37 →



## ԱՖԱՖԻՆ ՀԱՅԵԱՑՔԸ

Մարզասրահը շատ խճողուած էր այդ առաւօտ: Տաք հովերը, արդէն իսկ, ամրան մօտալուտ գալուստը կ'աւետէին: Տիկիներն ու օրիորդները, ծմրան ընթացքին իրենց մարմիններուն շուրջ կուտակած ճարպերէն ձերբազատուելու սիրոյն, չարաչար կը բանեցնէին քովէ-քով շարուած մարզանքի գործիքները:

Հակառակ որ օդաբարեփոխիչները (air-conditioners) հաճելի զովութիւն մը ապահոված էին սրահներուն մէջ, սակայն «վազք»ի եւ «աստիճաններէ վեր բարձրացող» մարզասարքերուն վրայ չարաչարուողները քրտնաթաթախ էին ու հեւասպառ: Ծանրութիւններ օգտագործած վարժութիւններ ընողները ուժասպառ՝ քանի մը կաթիլ ջուր ըմպելու պատրուակով, աներեւոյթ եղած էին մարզիչին խստապահանջ ուշադրութենէն:

Այս աշխուժութեան ընդմէջէն, տեղւոյն աղախիները, իրենց նայուածքը կեդրոնացուցած մաքրութեան վերաբերեալ գործերուն վրայ, անդադար կ'աւելին ու կը սրբէին գետինները եւ կը փայլեցնէին հայելիները:

«Քալելու» մարզասարքին վրայէն, ձանձրոյթս փարատելու համար, կը հետեւէի աղախիներէն մէկուն, երբ ան յանկարծ գլուխը վեր բարձրացուց ու էջեր պատմող արտայայտութեամբ մը նայեցաւ ինծի:

«Ինչպ'էս ես Աֆաֆ», ըսի:

Անմիջապէս, աչքերուն մէջէն անյայտացաւ իր մտածումները դաւաճանող հայեացքը:

«Շնորհակալ եմ տիկին», շնջաց ու գլխիկոր շարունակեց աշխատանքը:

Օր մըն ալ իրարանցում կար մարզասրահին մէջ ... Բազմութիւն մը հաւաքուած էր գետինը փռուած անձի մը շուրջ: Աֆաֆն էր, ձեռքէն ինկած աւելին ու սրբիչին քով երկնցողը:

«Անհանգիստ եմ, կ'ուզեմ տուն երթալ», ըսաւ ան:

Հաճոյակատարութիւնս բռնեց, առաջարկեցի ինքնաշարժովս տուն տանիլ զինք: Ճամբայ ելանք:

«Ո՞ր կ'ապրիս Աֆաֆ», հարցուցի, ըստ

այնմ կողմնորոշուելու համար: «Ալաային կողմերը», ըսաւ ու կռթնցուց գլուխը աթոռին ետին:

Կէս ժամ ետք հասանք Գահիրէի պարիսպին եզերքը, որուն մէջի բարձրունքին վրայ բազմած, Միհամէտ Ալիի մզկիթը կ'երեւեր իր փայլուն գմբէթներով: «Շարունակեցէք դէպի Սայէտա Այշայի հրապարակը ու հոնկէ աջ մտէք», ուղղութիւն տուաւ Աֆաֆ:

Սայէտա Այշայի շրջանը Գահիրէի ամենախճողուած ու անկանոն թաղերէն մէկն է: Տարբեր չափերու հանրակառքերը, թաքսիները, թոք-թոքներն ու անձնական ինքնաշարժերը տեւական մրցակցութեան մէջ են փողոցներուն եզերքն ի վեր ապրանքներ փռած ծախողներուն եւ գնում ընողներուն բազմութեան մէջէն ճամբայ բանալու եւ տեղ հասնելու համար: Ես ալ մտայ այդ խառնիճաղանճին մէջ եւ ճեղքելով զայն ինքզինքս գտայ բաւական նեղ փողոցի մը մէջ:

«Հոս, տեղ մը պէտք է որ շարէք ինքնաշարժը, ասկէ ետք ճամբան այնքան կը նեղնայ, որ միայն թոք-թոքները կրնան անցնիլ», խորհուրդ տուաւ Աֆաֆը:

Այս իրարանցումին մէջ ո՞ր պիտի շարէի ինքնաշարժս կը մտածէի, երբ գետնին տակէն, «ապագայ խոստացող» պատանի մը յայտնուեցաւ դիմացս: «Մատամ, մատամ, եկ՛ուր, քեզի համար լաւ տեղ մը ունիմ», ըսելով առաջնորդեց զիս աղբի կոյտի մը քով պարապ տեղ մը: Չէի կրնար դժուարահաճ ըլլալ, վարանումով համակերպեցայ:

«Ինքնաշարժիս վրայ մէկը աղբ չնետէ, ուշադրութիւն ըրէ», ըսի:

«Մի՛ մտահոգուիր, մատամ, երբ վերադառնաս ինքնաշարժդ հիմակուրնէ աւելի մաքուր պիտի գտնես», ըսաւ եւ ուսին զարկած, լաւ անցեալ ունեցած ու հիմա անյայտ գոյնով լաթի կտորը ցոյց տուաւ ինծի:

Աֆաֆին թելը մտած, կամաց-կամաց սկսայ քալել չսալայատակուած, նեղ արահետէ մը, որուն երկու կողմերը շինուած ապօրինի շէնքերը այնքան մօտ էին իրար, որ դրացիներ կրնային



պատուհանէն ապրանք փոխանակել: Բաւական քալելէ ետք, հասանք Աֆաֆին տունը: Լուրը հասած էր արդէն, որ Աֆաֆ «խառակայա»յի մը հետ տուն կու գար: Նեղ ու մութ սանդուխներէն բարձրացանք չորս յարկ ու հեւասպառ մտանք փոքրիկ յարկաբաժինէն ներս:

Պարտականութիւնս յաջողութեամբ կատարած ըլլալով կ'ուզէի հրաժեշտ տալ, սակայն տնեցիները շուրջս հաւաքուած, ժպտուն ու երախտապարտ, կ'ուզէին հիրասիրել զիս:

«Անպայման սուրճ մը պիտի խմես», կ'ըսէր մայրը: Դրացիները, որոնք «խառակայա» մը տեսնելու հետաքրքրութենէն մղուած եկած էին հոն, անմիջապէս անուշեղէն մը բերին սուրճին հետ հրամցուելու: Տան փոքրիկներէն մէկը ղրկուեցաւ մօտակայ կրպակէն զովացուցիչի շիշ մը բերելու ... Իրենց արժանապատուութիւնը չվիրաւորելու սիրոյն քիչ մը մնացի, խմեցի ու կերայ, բարի ապաքինում մաղթեցի Աֆաֆին, ապա հրաժեշտ տուի: Տնեցիներէն բանակ մը ընկերակցեցաւ ինծի մինչեւ ինքնաշարժս, որուն քով հպարտօրէն կանգնած տղեկը լաւ մը լուացած ու փայլեցուցած էր զայն:

Դէպի տուն վերադարձիս, կը մտածէի

այդ օրուան տարօրինակ իրադարձութիւններուն մասին, երբ յանկարծ յայտնաբերեցի Աֆաֆին քանի մը օր առաջուան խորհրդաւոր հայեացքին իմաստը: Մարգարահ անդամակցած, հանգստաւէտ կեանք վայելող տիկիներուն համար, դժուար է հասկնալը որ հոն գործիքներով ստեղծուած վազքը, սանդուխ բարձրանալը եւ ծանրութիւններ շալկելը Աֆաֆին առօրեայ շարժումներն են ...: Երբ առաւօտ կանուխ, պէտք է արագ քայլերով, նոյնիսկ վազելով ճեղքէ իր բնակարանէն մինչեւ հանրակառքերու կայարանին հեռաւորութիւնը, երբ պէտք է գնումներուն ծանր տոպրակները շալկած տուն վերադառնայ հեռուի շուկայէն, ուր աւելի աժան են ապրանքները, երբ պէտք է օրական քանի մը անգամ ոտքով բաճրանայ չորս յարկ սանդուխներէն վեր ...

Ամէն անգամ որ մարզուելու ժամանակ Աֆաֆին տեսնեմ, կը յիշեմ իր հայեացքը, որ կ'ըսէր՝ «Դուք սուղ-սուղ կը վճարէք արհեստական մթնոլորտի մէջ մարզուելու համար, իսկ ես՝ ձրիօրէն կը մարզուիմ ամէն օր»:

*Սօսի Ներեպեան-Յակոբեան  
Ապրիլ 2024*

→ շար. էջ 35-էն

## ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ



17. Ձայնական երաժշտութիւն (թերեւս երգեցողութիւն իմաստով)

18. Մարմնամարզ

19. Իմաստասիրութիւն

20. Դիցաբանութիւն

Պէտք է անպայման նշել նաեւ, որ Սոֆի եւ Զարուհի Մանիսալեան քոյրերը իրենց ամբողջ ունեցուածքը կտակեր են ՀԲԸ-Միութեան (Գահիրէ), նկատի առնելով որ ժառանգներ չունէին:



## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

### «ՍԻՆԻՔԻ ԽՈՂԱՆՈՑ»



Սինիք աշխարհի ինքնատիպ եւ արդէն մոռցուած կերակրատեսակներն են, որոնք գիրքով լոյս տեսեր են վերջերս, Երեւանի մէջ:

«Ութսուն (80) տեսակ ճաշեր հաւաքած ենք եւ արձանագրած այստեղ,- կ'ըսէ Սեդրակ Մամուլեան խոհարարը,- այս գիրքին մէջ կան թէ՛ մսեղէն, թէ՛ հաւեղէն եւ թէ՛ բանջարեղէն տեսակներ»:

Սեդրակ Մամուլեան «Հայ Խոհարարական Աւանդութիւնների Զարգացման եւ Պահպանման» ՀԿ նախագահն է:

Գիրքին հեղինակը կ'ըսէ թէ հաւաքուած աւելի քան հազար (1000) խոհագրերէն ընտրուած են այս գիրքին 80 ճաշատեսակները, որոնք ներկայացուած են միայն բաղադրութիւններով, առանց չափերու եւ առանց պատրաստելու կերպերուն:

Գիրքին նպատակն է մոռացութենէ փրկել Սինիքի խոհանոցը, տարածել, եւ կերակուրներու տեսակները առօրեային վերադարձնել:

Գիրքը պիտի տարածուի մարզերու դպրոցներուն մէջ, զբօսաշրջային գրասենեակներու կամ կեդրոններու մէջ:

Կերակրատեսակները հաւաքուեր են հին մատեաններէ, ինչպէս նաեւ գիւղէ գիւղ երթալով եւ հարցուփորձ ընելով տարեց կիները:

Ծրագրին մէջ կան նաեւ Վայոց Ձորի, Լոռիի եւ Տաւուշի ազգային խոհանոցները ներկայացնել առանձին գիրքերով:

Իրապէս կարելոր աշխատանք մը, որուն համար կը շնորհաւորենք ծրագրին եւ խոհագիրքին հեղինակները:

### ԱՍԼԱՆԵԱՆ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ



Էլիա Ասլանեան եւ Գոռ Սարգսեանը դարձեր են պալէի միջազգային նշանաւոր մրցոյթին մրցանակակիրներ:

Վերջերս Պելճիքայի մէջ տեղի ունեցած է International Ballet Competition Belgium դասական պարի (պալէի) միջազգային մրցոյթը:

Այս մրցումին Հայաստան կը ներկայացնէին Օփերային Թատրոնի մենակատարներ Գոռ Սարգսեան եւ Էլիա Ասլանեան, որոնք սուր պայքարէ ետք արժանի դարձեր են երկրորդ մրցանակին:

### ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱՇԱՐ



Հայաստանի Նկարիչներու Միութեան տան մէջ տեղի ունեցեր է նոր հրատարակութեան մը՝ «Սասունցի Դաւիթ» պատկերաշարին շնորհանդէսը:

Գոհար Գասպարեան, Տիգրան Մանկասարեան եւ Նարեկ Վան Աշուղաթոյեան երկու տարի աշխատեր են այս պատկերաշարը պատրաստելու համար:


Մեծ ու փոքր ընթերցողները վստահ ենք որ պիտի վայելեն այս գեղեցիկ աշխատանքը, որ Երեւանի ReAnimania փառաստօնին ճանջուեր է որպէս լաւագոյն պատկերաշար:





## ԳԻՐՔ ԾԱԽԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գալիֆորնիոյ Նահանգին Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ - Ա. Եւ Մ. Յովսէփեան վարժարանին մէջ տեղադրուած է գիրք ծախելու համար նոր գործիք մը, ուրկէ աշակերտները կրնան գնել իրենց արտադասարանային ընթերցումներուն համար թելադրուած գիրքերը:



Կը կարծենք, թէ ասիկա իր նախընթացը չունեցող երեւոյթ մըն է եւ արդիւնք՝ դպրոցին ուսուցիչ-ուսուցչուհիներուն անխոնջ ճիգերուն, ընթերցանութիւնը հաճելի եւ ցանկալի դարձնելու համար:

## ՆՈՐ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹ

Լուրը կը քաղենք Հայկ Դեմոյեանի դիմատետրի էջէն (նախկին տնօրէն Յեղասպանութեան թանգարանին).

«2023 թուականի Դեկտեմբերին «Հայփոստ»-ը ընդառաջելով առաջարկիս, թողարկեց ծնծղաներ արտադրող աշխարհահռչակ Զիլճեան ընկերութեան 400-ամեակին նուիրուած այս թերթիկը: Զեւաւորման հեղինակն է Դաւիթ Տեօվլաթեան: Դրոշմաթուղթին վրայ պատկերուած է իմ (Դեմոյեանի) հաւաքածոյիս մաս կազմող ծնծղան՝ Աւետիս Զիլճեանի հայերէն ստորագրութեամբ, 1930-ականներէն»:



## ՄԱՆՈՒՇԵԱՆ - ԿՐԱՖԻՔ ՎԷՊ

1944-ի Փետրուարին գերմանացիներու կողմէ մահապատիժ կ'ենթարկուի Միսաք Մանուշեան իր կնոջ եւ մարտական 22 ընկերներուն հետ:

Գերմանացիները այս մահապատիժը լայնօրէն կը տարածեն «Կարմիր Որմազդ»ին միջոցով, ֆրանսացիները ջլատելու համար:

Իր սխրագործութեան եւ Ֆրանսայի հանդէպ ունեցած նուիրումին համար 2024 թուականի Փետրուարին Միսաք Մանուշեան եւ կինը Մելինէն ֆրանսական պանթէոն «կը մտնեն», որպէս գերագոյն պատիւ:

Մանուշեան, որ բանաստեղծ էր, բանուոր եւ գործօն համայնավար, գնդակահարուեր է 21 Փետրուար 1944 թուականին:


Այս առիթով լոյս ընծայուեր է կրաֆիք վէպ մը (graphic novel, bande dessinée) «Կարմիր Որմազդի գնդակահարեալները» խորագրով, Թոմաս Զերբէզեանի եւ Ժ. Տ. Միրվանի գործակցութեամբ:



## ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԿԸ ԶԵՂԱՐԿՈՒԻ

Գերմանիոյ մէջ Ազրայէճեանի դեսպանատան զանգուածային ճնշումին պատճառով եւ փողոցային բողոքներ մեկնարկելու յայտարարութենէն եւ արտօնութիւն ստանալէ ետք, 6 մարտ 2024-ին նախատեսուած «Արցախի մշակութային ժառանգութիւնը» գիրքի շնորհահանդէսը, որ տեղի պիտի ունենար Պեռլինի՝ Արտաքին յարաբերութիւններու գերմանական խորհուրդի վայրին մէջ, չեղարկուած է:

Արդէն 4 մարտէն սկսեալ կազմակերպիչները բազմաթիւ սպառնալիքներ ստացած են թէ՛ իրենց անձին, թէ՛ իրենց աշխատակիցներուն ուղղուած: Գերմանացիները ստիպուած նահանջեր են եւ չեն կրցած գործադրել իրենց ծրագիրը: Ըսուած է, թէ միայն առ-





ցանց կրնան կատարել այս ծրագիրը:

Այս առթիւ անհրաժեշտ կը դառնայ շնորհահանդէսին առցանց մասնակցութեան իրականացումը: Անտանեյի է տեսնել, որ բռնատիրական վարչակարգ մը քիչ թէ շատ կը յաջողի Գերմանիոյ մէջ արգիլել հանրութեան կողմէ ազատ կարծիք դրսեւորելու եւ գիտական քննարկում ունենալու հնարաւորութիւնը, կը գրէ Փրոֆ. դոկտ. Անդրէաս Միլլեր, որ Ա. հազարամեակի եկեղեցոյ եւ կրօնքի պատմութեան փրոֆէսոր է, Քիլ քաղաքի քրիստոնէական Ալբրեխթի համալսարանէն ներս:


### ՓԱՐԱԶԱՆՈՎ 100



2024-ի Փետրուարի 16-էն Մարտ 2, ՀՀ ԳԱԱՀԱԻ Մշակութային մարդաբանութեան բաժնի վարիչ Լեւոն Աբրահամեանն ու նոյն բաժնի գիտաշխատող Գայիանէ Շագոյեան մեկնել են ԱՄՆ, մասնակցելու Լոս Անճելըսի Հարաւային Գալիֆորնիայի համալսարանի (USC) կազմակերպած միջազգային գիտաժողովին՝ նուիրուած Սերգեյ Փարաջանովի 100-ամեակին: Գիտաժողովը տեղի ունեցեր է Փետրուարի 22-24, միաժամանակ ցուցադրուել են Փարաջանովի ֆիլմերը:

Գիտաժողովին Լեւոն Աբրահամեան ներկայացուցեր է Ս. Փարաջանովի «Նճան գոյնը» ֆիլմը, մասնաւորապէս վեր առնելով ֆիլմին բանաստեղծական դրսեւորումները՝ “Toward the Poetics of The Color of Pomegranates»: Գայիանէ Շագոյեան հրաւիրուել է վերլուծելու չորրորդ նիստին՝ Politics and Violence զեկուցումները:

### ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԿԻՆԵՐ




Երեքշաբթի, 5 Մարտ 2024-ի երեկոյեան դաշնակահար Շահան Արծրունի ելոյթ ունեցած է Նիւ Եորքի (ԱՄՆ) Ազգային Արուեստներու Ակումբէն ներս (National Arts Club) ներկայացնելով հայ երաժշտուհիներու ստեղծագործութիւնները:

Արծրունի կատարել է առաջ այդ գործերը, խօսած է իւրաքանչիւր երաժշտուհիի մասին՝ Գայիանէ Չէփոտուրեանի, Գեղուհի Չթչեանի, Ալիսիա Թէրզեանի, Գոհարիկ Ղազարոսեանի, Մարի Գոյունճեանի, Լիւսի Հազարպետեանի, Սիրվարդ Քարամանուկի եւ Սիրվարդ Գազանճեանի մասին, ինչպէս նաեւ Ցրդ դարու Սահակադուխտ Սիննեցի երաժիշտ-մանկավարժուհիին մասին:

Շատ լաւ նախաձեռնութիւն մը, ծանօթացնելու համար հայ ժողովուրդի երաժշտուհիները, որոնք Ցրդ դարէն իսկ իրենց տեղը ունեցած են այս արուեստին մէջ:

### ՃԷՆԻՖԸՐ ԼՈՓԷՋ ԵՒ ԼԷՕ ՍԱՐՏԱՐԵԱՆ



Netflix ֆիլմերու շտեմարանը հրատարակել է նոր ֆիլմի մը՝ ATLAS-ի ծանուցումն ու որմազդը, որուն մէջ պիտի խաղայ միջազգային ֆիլմաստղ Ճենիֆըր Լոփէզը. ֆիլմը գրուած է Լեօ Սարտարեանի եւ Ահարոն Էլի Գոլէյթի կողմէ:

Ֆիլմը կեդրոնացած է Ատլաս Շէփըրտի վրայ (Ճենիֆըր Լոփէզի խաղարկութեամբ), տուեալներու փայլուն, բայց մարդատեաց վերլուծաբան մը, որ մեծ անվստահութիւն ունի արհեստական իմացութեան վրայ, կը միանայ ուրացող *ռոպոթը գրաւելու առաքելութեան*, որուն *հետ առեղծուածային անցեալ մը ունի*, բայց

երբ ծրագրերը կը ձախողին, մարդկութեան ապագան արհեստական իմացումէն փրկելու միակ յոյսը անոր վստահիլը կը մնայ: Ֆիլմը, որուն բեմադրիչն է Պրատ Փէյթըն, 24 Մայիս 2024-ին պիտի իջնէ Նեթֆլիքսի ցանկերուն վրայ:



## ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ ԵՒ 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի 25, Ուրբաթ 26 եւ Շաբաթ 27 Յուլիս 2024ին տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն տարեկան միջակումբային պասքէթ-պոլի մրցաշարքը, որ նուիրուած էր ակումբին 100-ամեակին\*:

Սոյն մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Եգիպտոսի Հայոց Թեմին բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ նախագահութիւնը տիար Տիգրան Ալեքսանեանի, ատենապետ Աղեքսանդրիոյ Քաղաքական Ժողովին եւ Հ.Բ.Ը.Միութեան Աղեքսանդրիոյ Մասնաճիւղին:

Հինգշաբթի, 25 Յուլիսը բեռնաւորուած էր չորս մրցումներով, 100-ամեակի տողանցքով եւ մետալներու եւ յուշանուէրներու բաշխումի արարողութեամբ:

Առաջին մրցումը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներուն աղջիկներու խումբերուն միջեւ էր, որ սկսաւ ու շարունակուեցաւ խիստ միակողմանի կերպով եւ ւաւարտեցաւ 44-12 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի աղջիկներուն:

Երկրորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի աղջիկներուն միջեւ էր: Թէպէտ Կամքի աղջիկները լաւ կազմակերպուած խաղարկութեամբ կարողացան առաջին քառորդախաղին ընթացքին տոկալ Արարատի աղջիկներուն դիմաց, սակայն պահեստի մարզիկներու չզոյրութեան պատճառով պարտուեցան, 68-25 արդիւնքով:

Ժամանակը հասած էր 100-ամեակի տօնակատարութեան, որ սկսաւ Եգիպտահայ հինգ մարզական ակումբներուն պասքէթ-պոլի երկսեռ մարզիկներուն տողանցքով: Եգիպտոսի, Հայաստանի եւ Հ.Բ.Ը.Միութեան քայլերգներէն ետք, մարզարանին աշխոյժ ու նուիրեալ ատենապետուհի տիկին Անի Թիւթիւնճեան-Խայաթ խօսք առաւ: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ակումբներուն, որոնք եկած էին տօնելու Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն 100-ամեակը, ապա պատմականը ըրաւ մարզարանին ու յիշեց անունները բոլոր նախկին ատենապետներուն, որոնց ջանքերուն եւ նուիրեալ աշխատանքին շնորհիւ է որ ակումբը գոյատեւած է 100 տարի: Տիկին Անին շնորհակալութիւն յայտնեց օրուան նախագահին, տղոց եւ աղջիկներուն բաժակները նուիրողներուն եւ տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանին, որոնք նուիրած էին մրցաշարքին բոլոր մետալները: Ան երախտագիտական խօսք ուղղեց Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի Ազգային Իշխանութիւններուն, նաեւ Հ.Բ.Ը.Միութեան Շրջանակային Յանձնաժողովին, իրենց նիւթական անսակարկ օժանդակութեան համար:

Մէկ վայրկեան յոտնկայս յարգուեցաւ յիշատակը 2024ին ընթացքին կեանքին հրաժեշտ տուած աղեքսանդրահայ ազգայիններուն:

Մարզական ակումբներուն ատենա-





պետները՝ տոքթ. Հրայր Տրդատեան՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ, տիար Լեւոն Դելփեան՝ Հ.Մ.Ը.Մ. Արարատ, տիար Զաւէն Լէյլէկեան՝ Հ.Մ.Ը.Մ. Կամք եւ տիար Գրիգոր Միքայէլեան՝ Սրբուհի Թերեզա, դաշտ հրաւիրուեցան ու 100-ամեակի յուշապնակներով պարգեւատրուեցան: Անոնք փոխադարձաբար յուշապնակներ յանձնեցին տիկին Անի Թիւթինճեանին:

Ակումբին Տիկնանց Յանձնախումբին աշխոյժ անդամուհիները դաշտ հրաւիրուեցան եւ ստացան 100-ամեակի մետալներ, առ ի երախտագիտութիւն իրենց երկարամեայ աշխատանքին:

Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան ատենապետուհի, հիւպատոս տիկին Աստղիկ Ալեքսանեան յուշանուէր մը յանձնեց տիկին Անի Թիւթինճեան-Խայթին:

Նախկին վարչականներ, սկաուտական շարժումի պատասխանատուներ եւ վեթերան մարզիկներ հրաւիրուեցան դաշտ, մետալներ ստանալու համար: Այսպէսով աւարտեցաւ 100-ամեակի տօնակատարութիւնը:

Ժամը 11-ի մօտ էր, երբ սկսաւ օրուան երրորդ մրցումը, հիւրընկալ խումբին եւ Սրբուհի Թերեզայի տղոց խումբերուն միջեւ: Այս շատ տաք խաղը ելեքտրականացուցած էր մթնոլորտը ու մինչեւ խաղին աւարտիլը անկարելի էր կռահել, թէ ո՞ր խումբը յաղթական պիտի հանդիսանայ: Հետաքրքրական մրցումը աւարտեցաւ 50-48 արդիւնքով, ի նպաստ Սրբուհի Թերեզայի տղոց:

Օրուան վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատին եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքին տղոց խումբերուն միջեւ էր, որ աւարտեցաւ արդիւնքի մեծ տարբերութեամբ, ի նպաստ Արարատին:

Ուրբաթ, 26 Յուլիսի յայտագրին վրայ միայն մէկ մրցում կար, մրցաշարքին ամենահետաքրքրականը՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐին եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատին տղոց խումբերուն միջեւ: Հակառակ որ Արարատի տղաքը լաւ խաղարկութեամբ կարողացան երբեմն հաւասարիլ եւ նոյնիսկ անցնիլ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐէն, սակայն երրորդ քառորդախաղէն սկսեալ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի տղաքը ցոյց տուին իրենց իսկական մակարդակը եւ մրցումը աւարտեցին ի նպաստ իրենց, 62-48 արդիւնքով:

100-ամեակի պարահանդէսը, որ կազմակերպուած էր «Սան Րայզ» պանդոկին ծովամերձ պարտէզին մէջ, իւրայատուկ երեւոյթ մըն էր, ուր մրցաշարքին մասնակցած երկսեռ բոլոր մարզիկները եւ Գահիրէէն ժամանած բոլոր խումբերուն համակիրները Աղեքսանդրիոյ համայնքին անդամներուն հետ ներկայ էին: Ըյին հնչեցուցած հայկական, եգիպտական ու եւրոպական սիրուած երգերն ու եղանակները պարահարթակը միշտ լեցուն պահեցին: 100-ամեակի կարկանդակը կտրուելէ ետք սկսաւ վիճակահանութիւնը, ուր մեծ թիւով բախտաւորներ պարգեւներ ստանալէ ետք, ներկաները հրաժեշտ տուին, իրենց հետ տանելով Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐին 100-ամեակին յաջող պարահանդէսին ներկայ գտնուելուն գոհունակութեան զգացումը:

Շաբաթ, 27 Յուլիսին աղջիկներու աւարտական խաղը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի խումբերուն միջեւ սկսաւ շատ արագ ու տաք: Յարձակում մը այս կողմ, յարձակում մը այն կողմ, պասքէթ մը հոս, պասքէթ մը հոն, սխալ արձակում մը հոս, ստոյգ արձակում մը հոն ... ու այսպէս արդիւնքի տարբերութիւնը շատ քիչ էր, յոյս մը ներշնչելով Արարատի համակիրներուն ու սիրտհատնում պատճառելով ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի համակիրներուն:

Երրորդ քառորդախաղի վերջաւորութիւնը մօտ էր, երբ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի աղջիկները սթափեցան իրենց թմրութենէն

եւ ստոյգ արձակումներով արդիւնքի մեծ տարբերութիւն ապահովեցին: Չորրորդ քառորդախաղը եկաւ ջլատելու Արարատին յաղթանակի յոյսը ու մրցումը աւարտեցաւ 72-45 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ-պոլի վեթերան մարզիկուհի տիկին Զուարթ Պասմաճեան-Գալայճեան իր նուիրած բաժակը յանձնեց խմբապետ Լորիկ Տրդատեանին: Վարձքը կատար խումբին պատասխանատու տիկին Սեւան Տրդատեանին եւ օգնական Արեգ Աբգարեանին, այս յաղթանակին համար:

Մրցաշարքին վերջին մրցումը տղոց աւարտականն էր Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն եւ Սրբուհի Թերեզայ խումբերուն միջեւ, որ խիստ միակողմանի ըլլալուն չկարողացաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել: Հակառակ որ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն մարզիչը, ժամանակ մը ետք, խումբին պահեստի մարզիկներուն յանձնեց խաղը, նոյնիսկ անոնք իրենց գերազանց խաղով անկարողութեան մատնեցին Սրբուհի Թերեզայի մարզիկները: Մրցումը աւարտեցաւ 66-29 արդիւնքով եւ խմբապետ Բիթըր Թերզեան ստացաւ բաժակը, որ նուիրուած էր տէր եւ տիկին Կարէն Ճոճոճեանի կողմէ: Վարձքը կատար խումբին պատասխանատու տիար Ռուբէն Սիմոնեանին, օգնականներ Արմէն Իրատեանին եւ Ժիրայր Սուլթանեանին այս յաղթանակին համար:

### **\*Ակնարկ մը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մասին**

Պոլսոյ ՀՄԸՄ ի՝ «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն» հիմնադիրներէն Հայկ Ճիզմէճեան 1923ին, Աղեքսանդրիոյ մէջ հիմն դրած է Եգիպտոսի առաջին ՀՄԸՄ ի մասնաճիւղին: 1924ին Մարմնամարզական Միութիւնը կազմուած է:

Սեփական ակումբ ունենալու դժուարին պայմաններով, հայ մարզասէր երիտասարդութիւնը մարզուած է վարձուած տարբեր մարզական ակումբներէ ներս: Կազմուած են պասքէթ-պոլի, թէնիսի եւ փինկ-փոնկի խումբեր, որոնք յառաջացած են յաջորդական վարչութիւններու նախաձեռնութեամբ եւ պատուաբեր արդիւնքներ ձեռք բերած են:



Հիմնադրութիւնէն մինչեւ իր այժմու կայքին մէջ հաստատուելը՝ միութիւնը փոխած է եօթը մարզավայր:

Մարզական «Տորք» Միութիւնը հանդիսացած է ՀՄԸՄ ի երկրորդ ակումբը Աղեքսանդրիոյ մէջ, իր կեդրոնը հաստատելով Սիտի Պիշրի մէջ: «Տորք»ի մարզիկները 1925ին, միամեայ իրենց գործունէութեան աւարտին եւ ընդհանուր ժողովի որոշումով, միացած են Աղեքսանդրիոյ մէջ հիմնուած ՀՄԸՄ ին: Հետեւաբար «Տորք»ի մարզական կառոյցը կազմալոյծ եղած է: Հետագային, գիտակից տարբերու նախաձեռնութեամբ եւ մարզասէր հայորդիի մը տրամադրած նիւթական օժանդակութեամբ, «Տորք» միութիւնը վերակազմուած է 1935ին:

1934ին Շաթափի մէջ բացումը կատարուած է ՀՄԸՄ ի նոր մարզավայրին, որուն մէջ կազմակերպուած է Սկաուտական Շարժումը իր Գայլիկներու բաժինով, որ 1937ին անդամակցած է «Եգիպտական Ազգային Սկաուտական Գահիրէի Կեդրոն»ին:

Միութիւնը 1935ի ընթացքին փոխադրուած է «Ամպրուազ Րալի»ի մարզավայրը, շարունակելով գայլիկներու շարժումը:

1940-ականներուն, պատերազմի շրջանին, ՀՄԸՄ իր հաւաքոյթները շարունա-



կած է «Իպրահիմէյա Սփորթս Բլապ»ին մէջ:

Ժամանակի ռազմական պայմաններուն պատճառով, քանի մը տարի կազմալոյծ վիճակէ մը ետք եւ նոր վարչական կազմով, Աղէքսանդրիոյ Սիտի-Պիշր արուարձանին մէջ «Տորք» մասնաճիւղին վերաբացումը կատարուեցաւ 11 Յուլիս 1943-ին: Սիտի-Պիշրի «Տորք»ը կը գործէր որպէս Աղէքսանդրիոյ ՀՄԸՄ ի մասնաճիւղ: Հակառակ հիմնադրութեան շրջանին ունեցած լայն ընդունելութեան, ներգաղթի պատճառով շրջանի հայութեան մեծամասնութիւնը հայրենիք գաղթած ըլլալուն, ՀՄԸՄ ի «Տորք» մասնաճիւղը կը փակուի 23 Փետրուար 1947ին:

Գ. Էսմէրեանի կողմէ «Ռեմէ»ի շրջանին մէջ ՀՄԸՄ Աղէքսանդրիոյ մասնաճիւղին տրամադրուած եւ Քիչիւքեան ընտանիքին կողմէ մարզադաշտին կարգաւորումը կատարուած նոր կայքին բացումը կատարուած է 2 Յուլիս 1944ին: 1 Մայիս 1949ին, տիկին Զապէլ Պասմաճեան կազմակերպած է Կայտերու բաժինը, իսկ 1952ին կազմուած է ակումբին իգական պասքէթ-պոլի խումբը:

ՀԲԸՄիութիւնը գնահատելով ՀՄԸՄ



մարզական միութեան ազգագուտ գործունէութիւնը, 1959ին անոր տրամադրած է ներկայի իր կեդրոնը, թիւ 19 Բրէսս Իպրահիմ պողոտայ, Քան տը Սէզար հասցէին: Մարզարանը բաղկացած է երկյարկանի առանձնատունէ մը իր շրջապատի պարտէզով, որուն ընդհանուր տարածութիւնը 1602 ք.մ. է, որուն մէջէն շէնքը կը գրաւէ 250 ք.մ., իսկ մնացեալը՝ պասքէթ-պոլի եւ խաղերու մարզավայր է: Այս առթիւ ակումբը վերանուանուած է «ՀՄԸՄ ՆՌԻ-ՊԱՐ Աղէքսանդրիա» անունով, իբրեւ մարզական թելը ՀԲԸՄիութեան Աղէքսանդրիոյ մասնաճիւղին:

Նոր մարզարանին բացման հանդիսութիւնը տեղի ունեցած է 23-24 Յուլիս 1960-ին, պասքէթ-պոլի մրցաշարքով մը, մասնակցութեամբ Պէյրութէն եւ Հալէպէն հրաւիրուած Հ.Ե.Ը.ի, Գահիրէի ՀՄԸՄ ՆՌԻ-ՊԱՐի եւ կազմակերպիչ ակումբի խումբերուն:

Աղբիւր՝ «Հայկական Համայնքային Կառոյցներ Եգիպտոսի մէջ» Համադրեց Տորք. Սուրէն Ն. Պայրամեան – Գահիրէ 2017:

*Սօսի Ներեպեան-Յակոբեան  
Յուլիս 2024*



## ԱՆԴԱՄԱԿԱՆ

«ՏԵՂԵԿԱՏՈՒ»-ն իր խորազգաց ցուցակցությունները կը յայտնէ  
Կոկանեան Սրահի արենապետուհի Եւ  
ՀԲԸՄիութեան Շրջանակային Յանձնաժողովի արենադպրուհի  
ՏԻԿԻՆ ԼԱԼԱ ՇԱՄԱՄԵԱՆ-ՆԻԿՈԼԵԱՆԻՆ  
Իր հօր՝ Հալէպի ՀԲԸՄիութեան բազմավաստակ արենապետ  
ՄԵԼՔՈՆ ՇԱՄԱՄԵԱՆԻ  
մահուան, որ տեղի ունեցաւ 3 Յուլիս 2024-ին Հալէպ (Սուրիա):

